Azg
armenian daily
19 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2002 ՀԻՆԳՇԱԲԹԻ 168 (2613)

Ծրագրվում է Պաղեստինի պետություն ստեղծել մինչեւ 2005 թ.

Միջազգային միջնորդների «քառյակը», որի մեջ մտնում են ԱՄՆ-ի, Եվրամիության, Ռուսաստանի եւ ՄԱԿ-ի ներկայացուցիչները, պատրաստում է փուլային ծրագիր, որի արդյունքը պետք է դառնա 2005 թ. Պաղեստինի պետության հռչակումը: Ասուրիեթեղ որեւ գործակալությունը հաղորդում է, որ Նյու Յորքում երեքշաբթի օրը կայացած «քառյակի» հանդիպումից հետո հրապարակվել է հաղորդագրություն, որտեղ խոսվում է գործողությունների ծրագրի մասին:

Եռափուլ ծրագրով մասնավորապես նախատեսվում է բարեփոխել պաղեստինյան պետության անվտանգության համակարգը, ստեղծել ազատ ընտրությունների անցկացման պայմաններ, որոշել երկրի նախնական սահմանները ըստ նոր սահմանադրության եւ անցկացնել իսրայելա-պաղեստինյան բանակցություններ, որոնք ուղղված կլինեն 2005 թ. հակամարտության վերջնական լուծմանը:

«Քառյակի» նիստին մասնակցել են ՌԴ արտգործնախարար Իգոր Իվանովը, ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելը, ԵՄ-ում նախագահող Դանիայի արտգործնախարար Պեր Սիգ Մելլերը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կոֆի Անանը, ինչպես նաեւ ԵՄ ներկայացուցիչներ Խավիեր Սոլանան եւ Քրիս Փաթենը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Մեղավոր են ե՛ւ «Արմենտելը», ե՛ւ պրովայդեր ընկերությունները

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ինտերնետ կապի ոլորտում ստեղծված վիճակի, «Արմենտելի» այստեղ դրսեւորած կամայականությունների, պրովայդեր ընկերությունների դժգոհությունների, տրանսպորտի եւ կապի նախարարության մոտեցման ու այս ամենի հետ կապված տնտեսական մրցակցության պաշտպանության խնդիրների առնչությամբ հարցազրույց ունեցանք ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ ՍԱՄՎԵԼ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ հետ:

– Պրովայդեր ընկերությունները բազմիցս բողոքել են «Արմենտելի» կողմից ինտերնետ կապի կամայական անջատումների դեմ: Չէ՞ որ դա տնտեսական մրցակցության պայմանների խախտում է: Ի՞նչ է ձեռնարկում հանձնաժողովն այս կապակցությամբ:

– «Արմենտելի» հետ կապված հարցերը մշտապես քննարկվում են: Ձեր նշած խնդրում առկա է եւ «Արմենտելի», եւ տվյալ ընկերությունների մեղավորությունը: Եթե ինտերնետ կապը վերածվում է միջազգային խոսակցությունների միջոցով գումար վաստակելու երեւույթի, ապա «Արմենտելն» իրավացի է: Մյուս կողմից ասել, թե նախկինում «Արմենտելն» անտեղյակ էր այդ երեւույթին, միամտություն է: Նա պետք է վաղուց համապատասխան քայլեր աներ: Շատ դեպքերում աղմուկն ավելին է լինում, քան իրականությունը: Ասեմ, որ այն կարծիքին, թե ինտերնետ կապով Հայաստանն ամենահետամնաց է, համամիտ չեմ: Դրանից օգտվողների քանակով մեր երկիրն ԱՊՀ-ում առաջին տեղերից մեկն է գրավում:

Տես էջ 2

ՈՉ ՄԻԱՅՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ...

Ալեքսանդր Վոլոշինը չի սիրում շփվել մամուլի հետ

ԵՐԵՎԱՆ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ Ռուսաստանի Դաշնության նախագահի աշխատակազմի ղեկավար Ալեքսանդր Վոլոշինի բանակցությունների մասնակցությամբ մեր երկիրն ԱՊՀ-ում առաջին տեղերից մեկն է գրավում:

Տես էջ 2

նախատեսված չէ): Ինչպես հայտնի է ՀՀ նախագահի մամլո ծառայության հաղորդումներից, բանակցությունները վերաբերել են երկկողմ հարաբերություններին տնտեսության եւ ռազմատեխնիկական համագործակցության ոլորտում, ինչպես նաեւ քննարկվել է իրադրությունը վրաց-ռուսական սահմանում:

Ծիծեռնակաբերդում Ալեքսանդր Վոլոշինը ծաղիկներ դրեց հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանին եւ հուշամատյանում թողեց հետեւյալ գրառումը. «Ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի եւ երախտագիտության խոսք նրանց, ովքեր պահպանել են այդ հիշատակը»:

Կոֆի Անանը Գուլիեւին հուսախաբ է արել

Սեպտեմբերի 17-ին հիշական մամուլը բերկրանք էր ապրում իբր Վարդան Օսկանյանի ՄԱԿ-ի ելույթը գիջել էր Ադրբեջանի արտգործնախարար Գուլիեւի ելույթին, եւ հայկական դիվանագիտությունը հերթական պարտությունն է կրել: Ի դեմ, նույն օրը Նյու Յորքում տեղի ունեցել Գուլիեւ-Անան կարճատեւ զրույց, որի ընթացքում քննարկվել է ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդիրը: Գուլիեւը գանգատվել է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը տասը տարի առաջ չորս բանաձեւեր է ընդունել, որոնցից եւ ոչ մեկը չի կատարվել: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը դիվանագիտորեն ակնարկել է, որ քաջալերում է ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունը, իսկ ԼՂ հարցով ՄԱԿ-ի ԱԽ չորս որոշումներն անցյալ են:

«Հետեւելով իմ ադրբեջանցի գործընկերոջ այս ամբիոնից արած մեկնաբանություններին, ես պարզապես միայն ցնցված չէի, ես նաեւ աղշած էի պարզելով, որ նա հետ է մնում իր եւ իմ նախագահների տարածաշրջանում գրանցած առաջընթացից», ՄԱԿ-ի ամբիոնից ասել էր Վ. Օսկանյանը:

Ավելացնենք, որ ինչ դեռ Ադրբեջանի արտգործնախարարը Վ. Գուլիեւն է, առավել եւս, որ նա է Բաքուն ներկայացնում միջազգային կարեւորագույն վեհաժողովներում, ՀՀ արտաքին քաղաքականությունը չի պարտվի: Ի դեմ, մեր կարծիքով, Վարդան Օսկանյանի ելույթը ՄԱԿ-ի ամբիոնից փայլուն էր: Թ. Հ.

Պաղեստինցիները վերադառնո՞ւմ են ինքնասպանական գործողությունների

6 շաբաթ տեւած ընդմիջումից հետո երեկ առաջին անգամ ինքնասպանական գործողություն կատարվեց Արեւմտյան ափի իսրայելական Ում-ալ-Ֆահմ բնակավայրի մոտ: Մահապարտ ահաբեկիչը պայթեցրեց մեջքին կապված ռումբն այն պահին, երբ ոստիկանները մոտենում էին նրան: Պայթյունը տեղի ունեցավ ավտոբուսի կանգառի մոտ: Սպանվեց մահապարտը, իսրայելցի մի վարորդ եւ վիրավորվեցին բազմաթիվ անցորդներ: Ահաբեկչական այս արարքը գալիս է կասկածի ենթարկելու Յասեր Արաֆաթի Ֆաթհ կազմակերպության վերջերս կատարած հայտարարության իրական արժեքը, թե պաղեստինցիք դադարեցնելու են ինքնասպանական գործողությունները, որոնք մեծ կորուստներ են պատճառում նաեւ իսրայելական զորքի հակադարձությանը ենթարկվող պաղեստինցի քաղաքացիներին: Ենթադրվում է, որ արարքի կազմակերպիչները Ֆաթհի մրցակից «Համաս» կամ «Իսլամական ջիհադ» կազմակերպություններն են: Հակառակի պես, գրեթե նույն պահին, Իսրայելի վարչապետ Շիմոն Պերեսը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայից հայտարարում էր, թե «ժամանակն է, որ Իսրայելն ու պաղեստինցիք բանակցեն խաղաղության շուրջ: Մենք կարող ենք դառնալ քաղաքականապես 2 պետություն եւ տնտեսապես 1 ամբողջություն»:

Բուշի կարծիքով, Սադդամ Հուսեյնը փորձում է հիմարացնել աշխարհը

Ս. Նահանգների նախագահի կարծիքով, Իրաքի նախագահը փորձում է հիմարացնել աշխարհը, «սակայն նա չի կարող հիմարացնել բոլորին»: Ջորջ Բուշի տպավորությամբ Սադդամ Հուսեյնը, համաձայնվելով ՄԱԿ-ի քննիչների վերադարձին, չի փոխել զանգվածային ոչնչացման զենքեր արտադրելու, դրանցով սպառնալու իր միտքը: Երկրի նախագահին երեկ Կոնգրեսում ձայնակցում էր պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը, որի կարծիքով Իրաքի նախագահը շարունակում է սպառնալիք լինել ողջ աշխարհին: «Մենք, ասաց Ռամսֆելդը, փորձում ենք ապահովել մեր քաղաքացիների, մեր դաշնակիցների անվտանգությունը»: Ռամսֆելդը Կոնգրեսի պաշտպանության հարցերի հանձնաժողովի անդամներին բացատրեց, որ Բուշի կառավարությունը ձգտում է Կոնգրեսից ստանալ նոր որոշում Իրաքի նկատմամբ ռազմական գործողություններ ձեռնարկելու վերաբերյալ: Հատկանշական է, որ Ռամսֆելդի ելույթը Կոնգրեսում ընդմիջվեց հակաիրաքյան պատերազմի հակառակորդ ցուցարարների բացականչություններով: Վերջիններս պաստառներ էին բարձրացրել, որոնց վրա գրված էր՝ «Քննիչնե՛ր, եւ ո՛չ պատերազմ»:

ՄԱՄՈՒԼԸ՝ ԱՌԹՍԱՅՈՒՄ

Թեզաձեն իր այցը Հայաստան ավարտեց լռությամբ

Իսկ սկսել էր ԵԱՏՀ-ին մոտալուտ անդամակցության հայտարարություններով

Վրաստանի պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Դավիթ Թեզաձեն իր եռօրյա այցը մեր երկիր ամփոփեց երեկ առավոտյան «Հաղթանակ» զբոսայգում տեղի ունեցած հրաժեշտի պատշգամբային արարողությամբ: ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի ուղեկցությամբ: Սակայն այդ արարողության շրջանակներում նախատեսված ճեպազրույցը լրագրողների հետ չկայացավ, ի դեմ, նախորդ օրն էլ այցի ծրագրից հանվել էր մամլո ասուլիսը: Այնպես որ, առավոտյան 9:30 «Հաղթանակ» զբոսայգի լրագրողներիս ժամանումը բոլորովին այլ նպատակի ծառայեց. մենք նախավարժանք-զբոսանք կատարեցինք բարձրադիր այգում: Իսկ այցի մանրամասները մեզ անհայտ մնացին: Չկարողացանք ճշտել նաեւ, թե ստորագրվե՞լ է արդյոք այցի արդյունքներն ի մի բերող արձանագրությունը, որը եւս նախապես որոշված էր: Պարզ դարձավ միայն, որ ռազմատեխնիկական համագործակցությունը խթանելու հարցեր են քննարկվել: Ու այդ շրջանակներում էլ իրենց աշխատանքներն են շարունակում երկու երկրների պաշտպանության գերատեսչությունների միջեւ փոխգործակցություն ապահովելու համար ստեղծված աշխատանքային խմբերը, որոնց գործունեությանը սկիզբ դրվեց Վրաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի պետի այս տարվա գարնանը Հայաստան կատարած այցի ընթացքում:

Ինչեւէ, նախարար Դ. Թեզաձեն այստեղ հանդիպումներ ունեցավ հանրապետության նախագահի, վարչապետի հետ: Արժանացավ Ամենայն հայոց կաթողիկոսի ընդունելությանը:

Մեր հարեւան երկրի պաշտպանության նախարարը Երեւանում հատուկ ընդգծեց, թե իր ժամանումը կապված չէր Վրաստան-Ռուսաստան հարաբերությունների սրվելու եւ Պանկիսի կիրճում ծավալվող իրադարձությունների հետ, այլ նախօրոք ծրագրված այց էր:

ԼԻԼԻԹ ԳԲԻԳՈՐՅԱՆ

ԱԶԳ

Ընթացիկ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Այս ձորերում էլ լույսեր կվառվեն

ՀՈՒԱԿ ակումբներ եւ նորագիրներ Տավուշի մարզում

Երկու օր Տավուշի մարզում Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության անդամ Գառնիկ Հովակիմյանը եւ գործիչ Կարեն Կակոյանը հանդիպեցին տեղի բնակիչների հետ:

ՀՈՒԱԿ-ի ներկայացուցիչներին առաջինը հյուրընկալեցին Հաղարծին գյուղատեսարանում: Դեռի Իջեւան տանող ճանապարհի եզրին գտնվող, պատմական հնավայր ճանաչված այս գյուղը թեեւ բազմաթիվ հիմնահարցեր ու խնդիրներ ունի (հողատարածությունները «ծռաճափ» են, տեխնիկա չկա: Թեեւ գյուղի բնակիչները բազմիցս դիմել են մարզապետարան, բայց ոչ միայն օգնություն չի ստացվել, այլեւ պատասխան, մշակույթի տան տանիքն ավերված է), սակայն միխթարելին այն է, որ այժմ 50 հաղարծինցիներ աշխատում են ճանապարհաշինության վրա: «Լինսի» հիմնադրամի միջոցներով իրականացվող աշխատանքները լավ հնարավորություն են ստեղծել գյուղի բնակիչների համար: Ինչպես մեր զրույցի ժամանակ ասաց գյուղապետ Սարգիս Պողոսյանը. «Ավելորդ շահարկումներից, պարապարապ խոսակցություններից մարդիկ հեռու են»: Եվ հասկանալի է, որ մարդիկ իրական ձեւով են տեսնում այսօրվա տնտեսական բարեփոխումները:

Երբ ծանոթանում ես մարզի հաջորդ գյուղին Հովվին, այն զգացողությունն ես ունենում, որ կորածոլորած մի ծմակուտ ես մտել: Եվ միայն պատահաբար է քարտեզի վրա նշվում Հովվի անունը: 110 աշակերտ եւ 20 ուսուցիչ ունեցող դպրոցը գտնվում է գյուղի վերին թաղում: Եվ ներքեւի թաղերից դպրոց հասնելու համար երեխաներն ու մանկավարժները 10-12 կիլոմետր ճանապարհ են կտրում: Հասկանես դժվար է լինում ձմռանը, երբ շաս հաճախակի գայլերը հարձակվել են երեխաների վրա: Եվ միայն բախտավոր պատահականությամբ դեռեւս մարդկային զոհեր չկան: Այս ամենի մասին գիտեն եւ գյուղում, եւ Տավուշի մարզապետարանում, եւ հանրապետության վերին իշխանություններում: ՀՀ պետական գնումների կոմիտեն նույնիսկ 840 հազար դրամ է տարել մարդել ավտոբուս գնելու համար: Սակայն արդեն երեք տարի գումարը գալիս, հասնում է մարզպետարան ու գյուղ եւ կրկին հետ է դառնում: Բանն այն է, որ շաս սովորական բան չի արվում մրցույթ չի հայտարարվում այս ավտոբուսը գնելու համար: Գյուղացիներից մեկը դառնությամբ ասաց. «Ավելի լավ է տղաս անուսում մնա, քան գիլակեր լինի»: Դժվար խոսք է, դժվար մարսելի խոսք:

Շաս ու շաս իշխանավորներ են եկել, գնացել, մնացել գյուղում ու մարզում, սակայն 840 հազար դրամ ունենալով էլ աշխարհի մի անկյունում ծվարած Հովվ գյուղի երեխաների եւ ուսուցիչների համար ավտոբուս չի գտնվել: Այսպես, ահա, 3 տարի:

Եվ դպրոցում հավաքված հովիեցիները երեխաների ծնողները, համարում են, որ բոլոր հարցերը հնարավոր կլինի լուծել միայն այն դեպքում, եթե միասնական դառնան, ուժ դառնան: Իսկ ուժ դառնալու ճանապարհի առաջին քայլը 12 նորագիրների մուտքն է Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության շարքերը եւ ՀՈՒԱԿ «Հովվ» ակումբի ձեւավորումը (ատենապետ՝ Նիկոլայ Տրուգյան):

Մարզի հանրահայտ Կողբ գյուղում ՀՈՒԱԿ երրորդ ակումբը ձեւավորվեց «Մշկավանքը», 20 նորագիրներով: Կողբեցիների ընտրությունը պատահական չէ: Իրական արժեքներ գնահատող այս գյուղի մարդիկ լավ են հասկանում, որ Հայաստանի այսօրվա իշխանությունների վարած տնտեսական քաղաքականությունը կարող է շահավետ լինել նաեւ գյուղի մարդկանց համար: Ուստի արդեն մեծ հեղինակություն վայելող այս կուսակցությանն անդամագրվելը խոր համոզմունքների եւ վստահության արդյունք է:

Ս. Մ.

Կրթաթոշակ կարիքավոր եւ ընդունակ ուսանողներին

Հայ օգնության ֆոնդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Գրիգոր Թաթուլյանը երեկ մամլո ասուլիս էր հրավիրել ներկայացնելու «Մաթեւոսյան կրթավճար» ծրագիրը: Արդեն 6 տարի սոցիալապես անապահով ընտանիքների 10 ուսանողների ծրագիրն ապահովում է 5 տարվա կրթաթոշակով: Այս տարվա ընդունելության քննություններից հետո Հայաստանի գրեթե բոլոր մարզերից ու Երեւանից ծրագրին դիմել է 74 դիմորդ: Պրն Թաթուլյանը նշեց, որ առաջին հերթին հաշվի են առնվում դիմորդների ընդունակությունները ու կարիքավոր լինելը: Վճարովի համակարգ ընդունված առաջին կուրսեցիներին կրթաթոշակ է նշանակվում միմիայն նրանց սոցիալական վիճակի մասին մանրամասն տեղեկություններ ստանալուց հետո, քանզի հիշ չեն դեպքերը, երբ դիմորդների մեջ հայտնվում են օրեղ առանձնատներ ու ավտոմեքենաներ ունեցողները: Այս տարի ընտրված 10 դիմորդներից 6-ը ԵՊՀ-ից են, 4-ը տնտեսագիտության ինստիտուտից: Եթե նախորդ տարիներին կրթաթոշակ էր տրվում միայն տնտեսագիտություն, կառավարում, միջազգային հարաբերություններ եւ լրագրություն մասնագիտություններին, ապա այս տարվանից բանասիրական ֆակուլտետի ուսանողները նույնպես հնարավորություն կստանան դրանից օգտվելու: Ուսման ցածր ապառաջադիմություն ցուցաբերելու, վաս վարքի, նյութական վիճակի բարեփոխման դեպքերում ընտրված ուսանողները դուրս են մնում ծրագրից: Իսկ բարձր առաջադիմությամբ ավարտածները 5 տարի պարտադիր պետք է աշխատեն Հայաստանում: Ի դեպ, այս տարի ծրագրին դիմած մնացած 64 ուսանողներից միայն 11-ն ուսման վարձը չեն մուծել: Տնօրենը ցավ հայտնեց, որ իրենց հնարավորությունները թույլ չեն տալիս ավելի մեծ թվով կարիքավոր ուսանողների հովանավորել, իսկ, նրա ասելով, բարեգործական որեւէ այլ կազմակերպություն նման նախաձեռնությամբ հանդես չի գալիս: «Մաթեւոսյան կրթավճար» ծրագրում ընդհանուր առմամբ ընդգրկված է 50 ուսանող, ասել է թե նույնքան ընտանիք ազատվել է ուսման վարձ վճարելու ծանր ու դժվարին հոգսից:

Ծրագրի հովանավորությամբ վերանորոգված Վանաձորի թիվ 8 դպրոցը հոկտեմբերի սկզբին կվերանվանվի Սնուշ Մաթեւոսյանի անվամբ:

Հայ օգնության ֆոնդը իրականացնում է նաեւ գիտական ծրագրեր, հովանավորում թափառաշրջիկ, մուրացիկ երեխաների կենտրոնին, մանկատան երեխաներին եւ Վանաձորի ծերանոցին:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեղավոր են ե՛ւ «Արմենտելը», ե՛ւ պրովայդեր ընկերությունները

Սկիզբը էջ 1

– Սակայն կապի որակը շաս ցածր է, ինչը դարձյալ «Արմենտելի» քաղաքականության հետեւանք է:

– Ճիշտ է, որակը ցածր է, այդուհանդերձ, Հայաստանը, ինչպես նշեցի, բարձր տեղ է գրավում դրանից օգտվողների թվով: Նշեմ նաեւ, որ մեզ մոտ գործող սակագներն էլ համապատասխանում են ԱՊՀ-ում գործող միջին գներին: Ինչ վերաբերում է «Արմենտելի» դրանք հաստատել-չհաստատելուն, կապն անջատել-միացնելուն, ապա զարմանալի բան է ստացվում: Այն մարմինը, որն իրավունք ունի իրագործել «Արմենտելին» կարգի հրավիրելու իր լիազորությունները, հանդես է գալիս դժգոհողի կամ անօգնական վիճակում գտնվողի դերում:

– Ո՞ւմ մասին է խոսքը:

– Խոսքը տրանսպորտի եւ կապի նախարարության մասին է: Եթե սակագինը հաստատված չէ, ապա այս նախարարությունն իրավունք ունի համապատասխան սանկցիաներ կիրառել: Ի՞նչ է պատահել: Այս խնդրի առնչությամբ պետք է նրանց հարց ուղղել:

– Ի՞նչ կասեիք «Հայհամակարգիչ»–«Արմենտել» դատական գործընթացի մասին, որտեղ վերջինիս դեմ հայց էր ներկայացվել նաեւ տնտեսական մրցակցության ոլորտում խախտումների համար: Այն ծգձգվում է, իսկ «Հայհամակարգչի» տնօրենը Ձեզ մեղադրում է որպես երրորդ կողմ իրենց չպաշտպանելու մեջ:

– Եթե «Հայհամակարգչի» տնօրենին թվում է, որ շանսաժի կարող է ենթարկել հանձնաժողովին, ապա նա սխալվում է: Դատական նիստից ընդամենը երեք օր առաջ, առանց նյութեր ուղարկելու, փաստաթղթային հիմնավորում տալու, մեզ հետ հարցը քննարկելու, նա դիմում է մեզ, ասելով եկեք, մեր կողմից երրորդ կողմ հանդես եկեք:

Մեզ ժամանակ է պետք, որպեսզի քննարկենք եւ որոշենք՝ երրորդ կո՞ղմ հանդես կգանք, թե՞ ոչ, կամ ո՞ւմ կողմից հանդես կգանք: Եվ, ի վերջո, եթե հարցը մտել է դատարան, թող նա որոշի, թե ով է արդար: Ինչ վերաբերում է ծգձգումներին, ապա ես նույն կերպ կարող եմ բողոքել, որ դատարանի այն որոշումը, որի հայցադիմողը մենք ենք եղել, «Արմենտելը» չի կատարում: Կարելի է ասել, որ այդ որոշումը կատարվել է 30 տոկոսով: «Արմենտելի» կողմից 5 մլն դրամ տուգանքը պետբյուջե մուծելը դեռ չի նշանակում, թե այդ որոշումը կատարվել է: Նա պարտավոր է հայտարարել իր պարտադրած հեռախոսասարքերը հետ գնելու պատրաստակամության մասին, պետք է մեզ ներկայացնի այդ գործարքից ստացված շահույթի ֆինանսական հաշվարկ՝ դարձյալ պետբյուջե վճարելու համար: Արդեն 3-4 ամիս է անցել որոշումից, եւ դրա վերջնական կատարումը կծգձգվի եւս 2-3 ամիս: Ի՞նչ արած, դատական գործընթաց է: Ես հույս ունեմ, որ օրենքով մեզ վերապահված լիազորությունները կիրառելով շաս բան տեղը կընկնի:

ՀԱԿԻՐՃ

Այսօր Երեւան է ժամանում Արկադի Վոլսկին

ԵՐԵՎԱՆ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Սեպտեմբերի 19-ին Երեւան է ժամանում Ռուսաստանի Դաշնության արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արկադի Վոլսկին: Ա. Վոլսկին մտադիր է մի շարք հանդիպումներ ունենալ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարությունում, Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության հետ, որոնց ընթացքում կքննարկվեն Հայաստանի եւ Ռուսաստանի տնտեսական համագործակցության հարցերը:

Սպասվում է նաեւ Յուրի Լուժկովի այցը

ԵՐԵՎԱՆ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Նախնական տվյալներով, հոկտեմբերի սկզբին նախատեսվում է Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի այցը Հայաստան: Ներկայումս ճշտվում են այցի ժամկետները եւ ծրագիրը:

Հանդիպում Աջարիայի ղեկավար Ասլան Աբաշիձեի հետ

ՍԽԱԼՔԱԼԱՔ, 17 ՍԵՊՏԵՄԲԵՐ, Ա-ԻՆՖՈ: Սեպտեմբերի 16-ին Աջարիայի Ինքնավար Հանրապետության ղեկավար Ասլան Աբաշիձեն ընդունել է Հայ եկեղեցու Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կոջոյանին: Շուրջ երեք ժամ տեւած հանդիպման ընթացքում քննարկվել են Աջարիայի հայ համայնքին առնչվող բազմաթիվ հարցեր: Ա. Աբաշիձեն նշել է, որ Աջարիայի հայերը ակտիվորեն մասնակցում են երկրի քաղաքական եւ տնտեսական կյանքին եւ մեծ ավանդ ունեն հանրապետության բարգավաճման գործում: Իր հերթին հայ հոգեւորականը շնորհակալություն է հայտնել Աջարիայի ղեկավարին հայ համայնքին օժանդակելու եւ սիրալիր ընդունելության համար: Ասլան Աբաշիձեի եւ Նավասարդ սրբազանի հանդիպմանը մասնակցել է նաեւ Աջարիայի «Վերածնունդ» հայ համայնքի նախագահ Արմեն Գեւորգյանը:

ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐ

Մորմոններ Վանաձորում

Ավելի քան երկու շաբաթ Վանաձորում գործում է մորմոնների (Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբեր) եկեղեցին: Եկեղեցու միսիոներներ երեք Մինասյանից եւ երեք Ուայթից (այսպես ներկայացան) տեղեկացանք, որ Լոռու մարզում նրանց հավատակիցները 6-ն են՝ 4-ը Վանաձորից, 2-ը՝ Մարգահովիտ գյուղից: Ընդ որում՝ եկեղեցու անդամներից 4-ը կին են եւ միայն երկուսը (Վանաձորից) տղամարդ: Երեքները հայտնեցին, որ իրենց եկեղեցին Հայաստանում գրանցվել է 1998 թվականից: Այժմ նրանց անդամների թիվը հանրապետությունում 1.500-ից ավելի է: Մեր հարցին՝ ընդունո՞ւմ են արդյոք Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ պետության հանդեպ ունեցած որոշակի պարտավորությունները, պատասխանեցին՝ իրենց հավատն հանգանակի 12-րդ կետը ներկայացնելով. «Մենք հավատում ենք թագավորներին, նախագահներին, ղեկավարներին ու մյուս իշխանություններին հպատակվելուն, օրենքին հնազանդվելուն, այն հարգելուն ու պաշտպանելուն»: Նրանք հավաստիացրին, որ չեն խուսափում բանակում ծառայելուց...

Զբաղվո՞ւմ են արդյոք մարդասիրությամբ, ինչպես ուրիշ աղանդների ներկայացուցիչներ: Պատասխանն այսպիսին էր. «Փողոցում մարդկանց չենք կանգնեցնում, դռները չենք ծեծում: Գործում ենք ծանոթների-բարեկամների միջոցով. ուղղակի ասում ենք, որ կանք, եւ ովքեր ուզում են, իրենք են կամավոր գալիս մեզ մոտ»: Հարցրեցինք բազմակնության մասին: Երեքները հավաստեցին, որ այսօր իրենց եկեղեցին մերժում է բազմակնությունը, եւ մեկ ամուսինը մեկ կին պիտի ունենա: «Մարդն ազատ է ընտրություն կատարելու թե՛ բժշկության մեջ, թե՛ այլ բնագավառներում: Որեւէ արգելք չենք դնում ընտրությունների ժամանակ քվեարկելու կամ սեփական թեկնածությունն առաջադրելու համար», վստահեցնում էին նրանք:

Բնականաբար եղան նաեւ դավանաբանական ու այլ հարցեր: Մասնավորապես հարցրեցինք՝ «աղանդներից միակն են, որ բացի Աստվածաշնչից որպես Սուրբ գիրք ընդունում են նաեւ «Մորմոնի գիրքը», իսկ ի՞նչ կասեն Հովհաննու հայտնության այս խոսքերի մասին. «Եթե մեկը սրանց վրա մի բան ավելացնի, Աստված էլ նրա վրա պիտի ավելացնի այն հարվածները, որոնք այս գրքի մեջ գրված են»: Պատասխանն այսպիսին էր. «Դա ասված է իր՝ Հովհաննեսի թղթերի մասին, ո՛չ թե ամբողջ Աստվածաշնչի»:

Ինչեւէ, լրագրողի նպատակն անկողմնակալ տեղեկատվություն ներկայացնելն է՝ ի շահ հասարակության: Քանզի՝ ով տեղեկացված է, նա պաշտպանված է:

ԽՈՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետութեան 47
Թող: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
հանդերձարանային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, ապանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են: Հանձնարարութիւնները ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Հարցազրույց

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի երեկվա նիստի օրակարգը բավականին ժլատ էր:

Օրակարգում 2 նախագիծ էր: Առաջինը վերաբերում էր տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգին, մյուսը՝ նախընտրական քարոզչության իրականացման համար տեսական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները թեկնածուների գրանցման վերջին օրվանից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում սահմանում են ընտրողների հետ թեկնածուների համատեղ հանդիպումների անցկացման ժամանակացույցը՝ ըստ ընտրական տեղամասերի, այդ մասին տեղյակ պահելով համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Խմբագրումը կապված էր այն հանգամանքի հետ, որ տեսական եւ տեղական կառավարման մարմինները հիշատակված ժամանակացույցի սահմանման խնդիր չունեն: Բացի այդ, համատեղ հանդիպումների ժամանակացույց սահմանելու հարցում կառավարման մարմինները կարող են շահագրգիռ լինել՝ թեկնածություն առաջադրելու դեպքում:

Օրակարգային երկրորդ հարցի համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին տեղեկացնում տարածք հատկացնելու մասին:

Նիստի ավարտին «Օրինաց երկիր»-ի ներկայացուցիչ, ԿԸՀ անդամ Արշաքես Ավոյանը հանդես եկավ հայտարարությամբ: Նա ԿԸՀ-ի եւ հատկապես նախագահ Արսակ Սահրադյանի ուշադրությունը հրավիրեց այն փաստին, որ մարզերի կողմից անվճար տարածքներ տրամադրելու կարգը սահմանելուն:

Առաջին հարցն արագ քննարկվեց ու հաստատվեց:

Երկրորդ հարցը հաստատվեց խմբագրմամբ: Նախ, ԿԸՀ-ն խմբագրեց 2-րդ կետը: Վերջինս սահմանում էր, որ տեսական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները թեկնածուների գրանցման վերջին օրվանից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում սահմանում են ընտրողների հետ թեկնածուների համատեղ հանդիպումների անցկացման ժամանակացույցը՝ ըստ ընտրական տեղամասերի, այդ մասին տեղյակ պահելով համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին:

Խմբագրումը կապված էր այն 3-րդ կետով էլ ԿԸՀ-ն սահմանեց, որ թեկնածուներն իրենց միջոցառումների անցկացման նպատակով տեսական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին ներկայացնում են հայտ համապատասխան տարածք տրամադրելու համար:

Հաջորդ կետով սահմանվեց, որ հայտը պետք է ներառի կազմակերպվող միջոցառման ձեւն ու վայրը, միջոցառումը սկսելու եւ ավարտելու ժամը, կազմակերպիչների տվյալները: Հայտերը պետք է ներկայացվեն կազմակերպվող միջոցառման օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ: 2 օրվա ընթացքում էլ կառավարման մարմինների ղեկավարները քննարկում են ներկայացված հայտերը եւ կազմակերպիչներին ու համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին տեղեկացնում տարածք հատկացնելու մասին:

Նիստի ավարտին «Օրինաց երկիր»-ի ներկայացուցիչ, ԿԸՀ անդամ Արշաքես Ավոյանը հանդես եկավ հայտարարությամբ: Նա ԿԸՀ-ի եւ հատկապես նախագահ Արսակ Սահրադյանի ուշադրությունը հրավիրեց այն փաստին, որ մարզերում ՆԳ բաժինները հրաժարվում են համայնքի ղեկավարի եւ ավագանու անդամի թեկնածուներին հաշվառման եւ քաղաքացիության մասին տեղեկանքներ տալ՝ առանց դրանք պահանջելով, օրինակ, հարկային վճարումների մասին փաստաթղթեր:

ԿԸՀ նախագահը նշեց, որ նախորդ օրը հանձնաժողովը նման տեղեկություններ է ստացել Վանաձորից եւ Գուգարքից: Այդ մասին Արսակ Սահրադյանը տեղյակ է պահել ՆԳ նախարար Հայկ Հարությունյանին եւ փոխնախարար Հովհաննես Վարյանին: Այս հայտարարությունն ու փաստերը վկայում են, որ տեղական ընտրություններն արդեն «սկսվել» են:

ԱՂԱՎՆԻ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԻՍՏ

ԿԸՀ-ն սահմանում է կարգեր

ՆԳ մարզային բաժիններն արդեն խափանում են

Եռանկյունու ներկա-բացակա կողմը

Երեւանի քաղաքաշինարանի հարեւանությամբ Ալեքսանդր Մյասնիկյանի արձանի դիմաց, համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ավարտվեց Եռանկյունի հրապարակի շինարարությունը: Սեպտեմբերի 17-ին նախագահ Քոչարյանն այցելեց քաղաքի նորացման խորհրդանիշներից մեկը հռչակված այդ հանգույցը, իսկ ամսի 19-ին սպասվում է հրապարակի պաշտոնական բացումը:



Հասկանալի է, որ Երեւանում սկսված քաղաքաշինական բումը դառնալու է Ռոբերտ Քոչարյանի ընտրարշավի լեյտմոտիվներից մեկը: Հյուսիսային պողոտա, Կասկադ, Եռանկյունի... Սրանք են թերեւս քաղաքաշինական եռուզեռի 3 հիմնական օջախները: Ընդ որում, թե տարածքը իրացնելու, թե ֆինանսներ ներգրավելու առումով այս երեք գոտիներից ամենահարմարը Եռանկյունի հրապարակն է թվում: Այստեղ զայրացած ու անգիջում տեղաբնակների քանակն այնքան մեծ չէ, որքան Հյուսիսային պողոտայի տարածքում է, ոչ էլ պահանջվող ներդրումների ծավալն է այնքան մեծ, որքան Կասկադում: Բայց որքան էլ տարօրինակ է, ամենամեծ խնդիրը ներդնողների հետ քաղաքային իշխանությունն ունեցավ հենց այս հատվածում:

Եթե Եռանկյունի հրապարակին հարող գոտում վերջին 1-2 տարում կառուցված երեք հյուրանոցները («Կոնգրես», «Արարատ», «Մետրոպոլ») եւ իտալական դեսպանատան շենքը վկայում են քաղաքային իշխանության հետեւողականության եւ ներդնողների վստահության մասին, ապա նույն այդ հրապարակին հարող մի քանի այլ հողակտորների վիճակը ծիծաղելի հակառակի մասին:

Քաղաքաշինարանի շենքին հարող կիսակառույցը պատկանում է սփյուռքահայ ներդնողների «Գառնի» խմբին, իսկ հրապարակի մյուս կողմն ընկած ամայությունը նախկին վարչապետ Արմեն Դարբինյանի սեփականության ներքո է: Ընդ որում, «Գառնի» խումբը վճարել է քաղաքաշինարանին այդ տարածքի համար մոտ կես միլիոն դոլար եւ կարող էր իր անգործությունը բացատրել նաեւ շինարարական ու նախագծային օբյեկտիվ խնդիրներով: Բայց ի վերջո հասկանալով, որ չի կարելի շարունակ դոփել տեղում «Գառնի» խումբը կառուցողական փոխհամաձայնության է եկել քաղաքաշինարանի հետ եւ պատրաստվում է հետ հանձնել կիսակառույցը նախկինում իր վճարած գումարը ներդնելով այլ տարածքում:

Բոլորովին այլ է Արմեն Դարբինյանի դեպքը: Սլավոնական համալսարանի ռեկտորն ընդհանրապես բացատրություն չունի, թե ինչու գործնականում ձրի իրեն բաժին հասած այս հողակտորի վրա գեթ մի շինարարական ցից չի տնկել կամ առավելագույնը 100 դոլար արժողությամբ կապույտ պաստառ չի քաշել, գոնե հանրապետության նախագահին հրապարակ այցելության ժամանակ ամոթով չանելու համար:

Եթե երկրի նախկին վարչապետը չի կարողանում պոտենցիալ ներդնողներ գտնել եւ առավելագույնը 1 կամ 1.5 միլիոն դոլար հայթայթել շինարարություն անելու համար մի գոտում, ուր վերջին 2 տարում 3 հյուրանոց է կառուցվել եւ 2 առաջատար եվրոպական դեսպանատուն է գործում, ապա առնվազն դժվար է հավատ ընծայել ավելի լուրջ ներդնողների հետ նրա բանակցային հմտություններին եւ ընդհանրապես ներդրումային միջավայրի մասին նրա կոնցեպտուալ դատողություններին:

Քաղաքային իշխանությունները, եւ ոչ միայն նրանք, հիմնավոր դժգոհություններ ունեն լոնդոնահայ գործարար, բարերար Վահե Մանուկյանից, որը քանի տարի շարունակ քաղաքի լավագույն հատվածներից մեկը՝ «Սեւան» հյուրանոցը շինարարական աղբանոցի վիճակում է պահում՝ ոչ կառուցում է, ոչ էլ վաճառում: Վահե Մանուկյանի վարքագիծը առավելապես քաղաքական դրդապատճառներ ունի, սակայն անհասկանալի է, թե ինչու է «Սեւան» հյուրանոցից մի քանի հարյուր մետր հեռու համարժեք կամակորություն դրսեւորում այսպես կոչված «յոտայինը» կարճացնելով նույն քաղաքաշինարանի լեզուն Վահե Մանուկյանին որեւիցե կոնկրետ որոշում պարտադրելու հարցում:

Ի վերջո, «Մարդկային զարգացման միջազգային հիմնադրամի» հարգարժան նախագահը կարող էր պատկառելի գնով վաճառել տարածքը եւ չխանգարել իր նախկին խորհրդական եւ ներկայիս փոխքաղաքաշինարար Նարեկ Սարգսյանի քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը: Էլ չենք խոսում այն մասին, որ մանկական կամ պատանեկան տարիքի բարեկեցությունը շեշտելու ավելի լավ եղանակ է գեղեցիկ եւ հանրօգուտ շենք կառուցելը, քան փոքր տարիքում ճաշակած սեւ խավիարի կամ այլ նրբուտեսների մասին պատմելը: Առավել եւս, երբ փաստերը վկայում են, որ սովետական շրջանի Արմեն Դարբինյանի ընտանեկան բարեկեցությունն այս վերջին տարիներին պետք է որ բազմապատկված լիներ:

ԱՐՍԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Երկու «Էքսպո» մեկ ամսում

Երկու խոշոր առեւտրա-արդյունաբերական ցուցահանդեսներ կբացվեն այս ամիս Երեւանում, ինչը թույլ է տալիս ասել, որ սեպտեմբերը կլինի տարվա «ամենատնտեսական» ամիսը: Առաջինը՝ «Արդյունաբերական Հայաստան EXPO-2002» տարածաշրջանային ցուցահանդեսը կբացվի այսօր Հայաստանի կառավարության շենքում: Այն կազմակերպել են Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միությունը (ՀԱԳՄ) եւ LOGOS էքսպո-կենտրոնը: Ցուցահանդեսի գործելու երեք օրվա (սեպտեմբերի 19-21-ը) ընթացքում կներկայացվեն հայկական սննդի, թեթեւ, քիմիական արդյունաբերության, շինանյութերի, փաթեթավորման, քարի մշակման, մեքենաշինական, գործիքաշինական, էլեկտրատեխնիկական, ինֆորմացիոն տեխնոլոգիաների, փայտամշակման ճյուղերի արտադրատեսակները: Բացի հայկական արտադրողներից, ներկայացված կլինեն արտադրական եւ առեւտրային ընկերություններ Ռուսաստանից, Եվրոպայից, ԱՄՆ-ից, Մերձավոր Արեւելքից: Ցուցահանդեսը հնարավորություն կընձեռի հայկական ընկերություններին գործընկերային կապեր հաստատել օտարերկրյա ընկերությունների հետ, կնպաստի ներդրումների ներգրավմանը Հայաստանի տնտեսության մեջ եւ արտահանման ծավալների ավելացմանը:

Այս միջոցառման ներկայացուցչական լինելու մասին է խոսում այն փաստը, որ բացի Հայաստանի ղեկավարներից եւ նախարարներից, կմասնակցեն բազմաթիվ օտարերկրյա հյուրեր, դեսպաններ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ցուցահանդեսի շրջանակներում տեղի կունենա Արդյունաբերողների եւ գործարարների միջազգային կոնգրեսի խորհրդի նիստը, կանցկացվի սեմինար «Մարկետինգային մտածողություն» թեմայով, մասնակիցներին կտրվեն դիպլոմներ եւ մրցանակներ:

Հաջորդ ցուցահանդեսը՝ «Արմրոդէքսպո-2002»-ը կազմակերպել են ՀՀ գյուղնախարարությունը, գյուղատնտեսական բարեփոխումներին աջակցող գրասենյակը եւ «Ագրոբիզնեսի զարգացման կենտրոն» ՓԲԸ-ն: Այստեղ ներկայացվելու են միայն սննդի արդյունաբերության եւ գյուղմթերքների վերամշակման ճյուղերը: Այս ցուցահանդեսին դարձյալ հրավիրված են արտասահմանյան առեւտրային ընկերություններ: Միջոցառման ընթացքում կանցկացվի ալկոհոլային եւ ոչ ալկոհոլային խմիչքների դեգուստացիոն մրցույթ, իսկ ցուցահանդեսի փակման հանդիսավոր արարողության ժամանակ մրցույթի հաղթողներին կշնորհվեն մեդալներ եւ դիպլոմներ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ասոն Բլեյանը սկզբունքային է, Վիգեն Խաչատրյանը՝ ոչ

«Հայկական ժամանակ» օրաթերթից տեղեկանում ենք. Գյումրու «Ասպարեզ» ակումբում «Նոր ուղի» կուսակցության առաջնորդ Ասոն Բլեյանը պատասխանելով ՀՀ առաջին նախագահի՝ քաղաքական ասպարեզ վերադառնալու մասին հարցին, նկատել է. «Երրորդ հանրապետության շահերը պահանջում են, որ Լեւոն-Տեր Պետրոսյանն այս փուլում ներկայանա հասարակությանը: Կարծում եմ, որ դրանով նա կարեւոր քայլ արած կլինի, մենք կողջունենք Տեր-Պետրոսյանի վերադարձն ակտիվ քաղաքականություն»:

Բայց մենք ազգովին չենք խնդրում, չէ՞, ՀՀ առաջին նախագահին վերադառնալ: Լեւոն Տեր-Պետրոսյանի վերադարձն ակտիվ քաղաքականություն ակնհայտ ցանկանում են Ադրբեջանում, ինչը մարդկայնորեն հասկանալի է, քաղաքական տեսանկյունից՝ ոչ այնքան: Լրագրության ոլորտի համար Տեր-Պետրոսյանի վերադարձը ակտիվ քաղաքականություն ցանկալի չէ, քանի որ ՀՀ առաջին նախագահը միանգամից մեկ օրում 12 անուն թերթ փակելու վտանգություն ունի:

Միեւնույն ժամանակ պետք է նկատել, որ պրն Բլեյանը Հայաստանի քաղաքական այն սակավ գործիչներից է, որը վերջին տասը տարիներին իր քաղաքական հայացքներում հետեւողական է, սկզբունքային: Ոչ միայն Լ. Տեր-Պետրոսյանի հարցում: Մասնավորապես, ԼՊ հարցում պրն Բլեյանի տեսակետը որեւէ փոփոխություն չի կրել. Հայաստանը պետք է ճանաչի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը Ղարաբաղով: 1992 թ. հոկտեմբերի 22-ին «Ազգ» թերթում տպագրված ընդարձակ հոդվածում («Այլախոհության պահն է անց, խորհելու եմ կոչում») գրում է. «Խորհրդարանը պիտի զղջա ու ափսոսա 1992 թ. հուլիսի 8-ի իր ընդունած որոշման համար՝ հնարավորություն տալով հանրապետության նախագահին դարաբաղյան վեճի խաղաղ կարգավորման բանաձեւի գործադրման առավել հստակ ու վճռական քայլեր կատարելու: Խորհրդարանը պիտի ընդունի մեր ներկայացրած հայտարարությունը՝ ընդունելի խմբագրում-սրբագրումներով, դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման միջնորդական փուլից կտրուկ անցում կատարելով հայ-ադրբեջանական ուղղակի ու ակտիվ երկխոսության փուլի»:

Պրն Բլեյանը կոչ էր անում «ապահովել Ադրբեջան պետության կազմում Ղարաբաղի անվտանգությունն ու Ադրբեջանի քաղաքացի դարաբաղցու՝ իր հողում ապրելու իրավունքը»:

Հիշեցնենք, որ ՀՀ խորհրդարանը 1992 թ. հուլիսի 8-ի որոշմամբ ՀՀ իշխանություններին, առաջին հերթին՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին պարտավորեցրեց Հայաստանի ստորագրությունը չդնել որեւէ փաստաթղթի տակ, որտեղ ԼՊ-ն հիշատակվում է որպես Ադրբեջանի մաս: Մինչ այդ որոշումը ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի ենթակայության տակ աշխատող Քրիստիան Տեր-Ստեփանյանն իր ստորագրությամբ ճանաչել էր Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը առնվազն չորս անգամ:

Ասոն Բլեյանի հետ Գյումրի էր մեկնել լիբերալ-դեմոկրատ (պատկերացնո՞ւմ եք) Վիգեն Խաչատրյանը: Ըստ «Հայկական ժամանակի»՝ «Վիգեն Խաչատրյանը մասնակցեց հարեւան երկրների սահմանների ճանաչումը: Ըստ նրա, Հայաստանը պիտի հստակ հայտարարի, որ ոչ Ադրբեջանից, ոչ էլ Թուրքիայից տարածքային պահանջներ չունի»:

Թուրքիային թողնենք հանգիստ եւ տեսնենք, թե ինչ էր ասում պրն Խաչատրյանը 1992 թ. հունիսի 22-ի խորհրդարանի նիստում. «...Մենք երբեւիցե փակ նիստերում հավանություն չենք տվել, թե Հայաստանը պիտի ճանաչի Արցախն Ադրբեջանի կազմում: Մենք գտնում ենք, որ սխալ է տեղի ունեցել Հելսինկիի փաստաթղթում, ուր նշվում է Ղարաբաղը որպես Ադրբեջանի մաս: Չի կարելի, որ Շահումյանի նման կորուստից հետո միայն սպափվենք: Կարծում եմ, այն փաստաթղթի մասին, որ խոսեցինք, ԳԽ-ն պիտի որոշում կայացնի դրանք անընդունելի ճանաչելու համար: Մանավանդ պետք է արգելել սրանից հետո որեւէ անձի մի փաստաթուղթ ստորագրել, որի մեջ ընդունվում է Արցախն Ադրբեջանի կազմում լինելը: Չէ՞ որ մենք միասնաբար նպատակ ենք ընտրել հասնել Արցախի իշխանությունների ճանաչմանը, ի՞նչը ստիպեց այդման շուտ նահանջել եւ համաձայնել»:

Իսկ մեզ մնում է զարմանալ՝ ինչո՞ւ էր տասը տարի առաջ պրն Խաչատրյանն անընդունելի համարում ԼՊ-ն Ադրբեջանի կազմում թողնելը, իսկ այսօր ուղղակի հակառակն է պնդում:

Ե. Հ.

ԻՐԱՎԻՃԱԿ

Երբ 16 ընդդիմադիր կուսակցությունները շաղեցին հայտարարել առաջիկա նախագահական ընտրություններին միասնական թեկնածուով մասնակցելու իրենց մտադրության մասին, հայաստանյան մամուլի հրապարակումներում հաճախացան 1996 թվականի նախընտրական շրջանի հետ ներկա իրավիճակի զուգահեռները: Ըստ իս՝ մակերեսային համեմատություն է, հիմնված զուտ արտաքին նմանության վրա, քանի որ թե՛ այն ժամանակ, թե՛ այժմ ընդդիմությունը ձգտում էր համախմբվել մեկ թեկնածուի շուրջ: Ուրիշ ոչ մի նմանություն չկա: Փորձենք մտաբերել 1996-ի մթնոլորտը:

ա) Երկրում թեւածում էր վախի, կասկածամտության, վաղվա օրվա հանդեպ անվստահության ուրվականը: Դաշնակցության գործունեությունն արգելված էր, շարունակվում էր «Դրոյի» դատավարությունը: Վահան Հովհաննիսյանը ճաղերի հետեւում նստում էր իր քառասնամյակը, եւ նախագահության 6 թեկնածուներ, իբրեւ իրենց խիզախության բոլորովին էլ ոչ ծեւական գրաւեւորում, մամուլով շնորհավորել էին նրան: Իշխանությունների ակտիվ աջակցությամբ քաղաքական ուժերի պառակտումներ էին տեղի ունենում: Այդ «տենդը» համակել էր նաեւ ռամկավարներին: Կուսակցության գույքի, կնիքի, անվան հանդեպ հավակնություններ ունեցող ոմանք գիշերով հարձակվել էին կենտրոնական գրասենյակի վրա, կատարել գողություններ, ավելի ուշ՝ փորձում էին փակել **«Ազգ»** օրաթերթը, իսկ առավել սուրյոգ՝ հիմնադիրներից խլել եւ օրվա իշխանություններին հաճո անձանց տրամադրել հրատարակման իրավունքը: Քիչ ավելի հետո, կուսակցության 6-րդ օրինական պատգամավորական ժողովից փորձ անց, տվյալ անձինք գումարել էին «պատգամավորական ժողով» կոչվող մի խառնահավաք, ուր, ի շարս այլ անհեթեթությունների, ոմն պատվիրակ առաջարկել էր «համագումարի կողմից դիմում հղել ՀՀ նախագահին՝ «Ազգի» պաշտոնական խմբագրին Հայաստանից վտարելու պահանջով»: Բարեբախտաբար, այդպիսի վտարում չհետեւեց, բայց բուն առաջարկը անչափ բնորոշ էր՝ առաջարկողն էլ, ենթարկողներն էլ հրաշալի գիտեին, որ մարդուն հայրենիքից վտարելը միանգամայն հնարավոր էր, ընդամենը այն «հիմքով», որ այս կամ այն անձը սրա կամ նրա քիմքին հաճելի չէր: 1996-ի հուլիսի 16-ին այս խայտառակ պատմությանն իբրեւ արձագանք «Ազգում» լույս տեսավ իմ «Առաջ դեպի... 1937 թվակա՞ն» հոդվածը, եւ արդեն վերնագիրն իսկ ամեն ինչ ասում էր: Այո, երկրում փորձ էր արվում ստեղծել 1937-ին բնորոշ ահ ու սարսափի մթնոլորտ: Այդ օրերին ծեծել էին ազգային ռադիոյի «Երեւան» ծրագրի լրագրող Վարդան Վարդանյանին, քանի որ վերջինս հանդգնել էր ռադիոհաղորդումներում ասել, թե հացի գործարաններից մեկի թողարկած արտադրանքը... թերքաշ է: Բայց բանը Վարդանին ծեծելով չվերջացավ, սկսվեց եւ ամիսներով շարունակվեց ռադիոյի տնօրեն Ստեփան Զաքարյանի հալածանքը, որն ավարտվեց նրա պաշտոնանկությամբ: Պատճառն ի՞նչ էր. «հասարա՛կ» բան՝ հացի տվյալ գործարանի տնօրենը (թե՞ վերջինիս եղբայրը, լավ չեմ հիշում) ՀՀՇ-ի տարածքային կազմակերպության ղեկավարներից էր: Այս մասին էլ կարելի է կարդալ **«Ազգի»** 1996 թվականի հուլիսի 4-ի «Ով ում է ծառայում՝ ՀՀՇ-ն պետությա՞նը, թե՞ պետությունը ՀՀՇ-ին» իմ հրապարակման մեջ: Նույն ամիսներին տենդագին փորձեր էին արվում ԱԺ-ով անցկացնել ՁԼՄ-ների նոր օրենքի մի օրապակաս նախագիծ, որն օրենք դառնալու դեպքում դամոկլյան սուր էր լինելու իշխանությունների ձեռքին՝ ընդդեմ ամեն կարգի անցանկալիների, քանզի պարունակում էր պատժամիջոցներ՝ «հասարակական կարգի փոփոխության» փորձերի ու կոչերի դեմ: Սալինյան բառապաշարից փոխառված այդ «հասկացության» տակ, ինքնըստինքյան հասկանալի է, կարող էր ընկնել ամեն մի չնչին դժգոհություն: Ամենանողկալին, սակայն, մնում էին օրվա իշխանությունների անզուսպ փառաբանությունը, հավատարմահպատակության զգացումների ստիպողական առաջացնող զեղումները, նախագահին «առաջնորդ» եւ «հիմաստուն» բառերով հատկապես պետական լրատվամիջոցներում քծնելու ամոթանքը: Հասարակությանը համառորեն ներշնչում էին, որ այլ նախագահի ընտրության դեպքում երկիրն անվերադարձորեն կանգնելու է պատերազմի վերսկսման վտանգի առաջ, կյանքը վատանալու է, գները թանկանալու են եւ հազար ու մի այլ բաներ: Ժողովրդին վախ ներարկելը, այսպիսով, բարձրացվել էր պետական քաղաքականության մակարդակի:

բ) Գործող նախագահի դեմ միասնաբար պայքարելու առաջին փորձը 1996-ին կատարեցին ԳԻԱՐՔՄի-ն, ՀԴԿ-ն, ՀԿԿ-ն եւ «կասեցված» ՀՅԴ-ն, որոնք հուլիսի 2-ի իրենց համատեղ հայտարարության մեջ նշել էին, թե «հասարակության կարող ուժերի միաբանությունը համարելով երկիրը ճգնաժամից դուրս բերելու գլխավոր պայման, նշելով քաղաքական մոտեցումներում եւ հակաճգնաժամային ծրագրերում ընդհանրությունները»՝ հայտարարում են «երկրում դրական արմատական փոփոխությունների երաշխիքներ ստեղծելու նպատակով լայն համագործակցության եւ նախագահական ընտրություններում համատեղ եւ համաձայնեցված գործելու վճռականությունը»: Երկու ամիս անց, 1996-ի սեպտեմբերի 7-ին, վերջապես ստեղծվեց «Ազգային համաձայնության դաշինքը» իր միասնական թեկնածուով՝ Վազգեն Մանուկյանով, որն էլ սեպտեմբերի 22-ի նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ, ինչն իշխանությունները տրորեցին տանկերի թթուրներով:

գ) Վազգեն Մանուկյանը ԱԺՄ, ԱԻՄ, ՀԴԿ, ՀՅԴ եւ «Արցախ-Հայաստան» կուսակցությունների միասնական թեկնածուն էր: Այն ժամանակ նրա շուրջը համախմբված «Դաշինքը» ժողովրդին ներկայացել էր 4 կետից բաղկացած հստակ ծրագրով. գրել մեկ տարի առաջ բացահայտ օրինախախտումներով ձեւավորված Ազգային ժողովը եւ նշանակել նոր ընտրություններ, 2 տարվա ընթացքում ներկայացնել նոր սահմանադրության նախագիծ (բոլորը գիտեին, որ գործող սահմանադրությունը ժողովրդի մեծամասնության կողմից ընդունված չէր), ձեւավորել ազգային համաձայնության կառավարություն, եւ վերջինը՝ մինչեւ նոր Ազ ընտրությունները «Դաշինքի» մեջ մտնող կուսակցությունների ներկայացուցիչներից ստեղծել Անվտանգության խորհուրդ:

Այս հստակ ծրագիրն էր, որ հաղթանակ ապահովեց «ազգային համաձայնության միասնական թեկնածու» Վազգեն Մանուկյանին, ժողովուրդը ա՛յս ծրագրի հետեւից գնաց, ո՛չ Վազգենի անձի կամ նրան սատարող կուսակցությունների:

Այժմ դիտարկենք, թե ինչ ընդհանրություններ կան 1996-ի վերը նշված իրավիճակի եւ ներկայի միջեւ:

1. Վախի մթնոլորտը բացակայում է. փակված կուսակցություն, արգելված լրատվամիջոցներ չկան, ծեծված լրագրողներ, կառավարող կուսակցության այս կամ այն ֆունկցիոներների «ֆեֆին կոչելու» համար հալածվողներ՝ նմանապես: Ոչ մեկի գլխին կախված չէ Հայաստանից վտարվելու սպառնալիքը, ճաղերի հետեւում իրենց տարեդարձը նշող քաղաքական գործիչներ նույնպես չկան: Ով ինչ ուզում՝ ասում ու գրում է, ընդհուպ երկրի նախագահին ուղղակի զրպարտելն ու «Հոկտեմբերի 27-ի» ոճրագործության հետ առանց որեւէ հիմքի «կապելու», նրա անձի հանդեպ ատելություն ու մաղձ բորբոքելու մոլուցքը: Նույնիսկ իշխանամետ լրատվամիջոցները ա՛ռ ավելի չափավոր են ներկա նախագահի արժանիքները մատնանշելու իրենց ջանքերում: Ընդդիմությունն այլեւս չի վախենում բացեիբաց ասել, որ իր նպատակը «Քոչարյանի ռեժիմը» տապալելն է եւ չի խողարկվում «երկրում արմատական փոփոխությունների երաշխիքներ ստեղծելու» մտուրատաս ձեւակերպումներով: Ավելին, 16 ընդդիմադիր կուսակցությունների վերջերս հրապարակված «Քաղաքական հայտարարության» միակ կետը նախագահին ամեն կերպ ասպարեզից հեռացնելու խոստումն է, քանզի նրան է վերագրվում երկրի ներկայիս դժվարությունների ողջ պատասխանատվությունը՝ առանց այդ վիճակի առաջացման պատճառների լուրջ բացահայտումների:

2. Ի տարբերություն 1996-ի «Ազգային համաձայնության դաշինքի», ներկայիս ընդդիմությունն այլեւս հարց չի բարձրացնում գործող Ազգային ժողովը լուծարելու, Անվտանգության խորհուրդ ձեւավորելու եւ նոր սահմանադրության նախագիծ ներկայացնելու մասին: Նախ, որովհետեւ նախագահական ընտրություններից անմիջապես հետո տեղի են ունենալու Ազ ընտրությունները, երկրորդ՝ գործող նախագահն ի՛նքն է շահագրգիռ նոր սահմանադրության ընդունմամբ:

3. 1996-ի ընդդիմությունը հրապարակ էր իջել արդեն իսկ մշակված հակաճգնաժամային ծրագրով: Այժմյան ընդդիմության լիդերներից մեկը, «Հանրապետություն» կուսակցության խորհրդի նախագահ Ալբերտ Բազեյանն իրենց «Քաղաքական հայտարարության» հրապարակման օրը նույնիսկ բացեիբաց ասում էր, թե իմաստ չի տեսնում այդպիսի ծրագիր ներկայացնելու մեջ, քանի դեռ իրենք այն կենսագործելու իշխանական լծակներ չունեն: Տարօրինակ հարցադրում. ո՞ւր է երաշխիքը, որ իշխանության գալուց հետո իրենց իրականացնելիք ծրագիրը ընդունելի է լինելու ժողովրդի համար: Իսկ եթե ո՞չ, եթե դա լինի շատ ավելի անընդունելի ծրագիր, քան հիմա իրականացնում է Ռոբերտ Քոչարյա՞նը: Ներկայիս ընդդիմությունն իրեն հաշիվ տալի՞ս է, թե որքա՞ն մեծ կլինի ժողովրդի հիասթափությունն այդ պարագայում, եւ ի՞նչ անցանկալի քաղաքական ցնցումներ կսկսվեն Հայաստանում:

4. 1996-ի ընդդիմությունը խոստանում էր կազմել «Ազգային համաձայնության կառավարություն»: Դա համազգային համախմբման, երկրի առողջ ուժերը զորաշարժի ենթարկելու, ընդհանուր ուժերով ճգնաժամը հաղթահարելու ծրագիր էր: Ներկայիս ընդդիմությունը համախմբվել է (եւ ժողովրդին էլ փորձում է համախմբել) ընդամենը մեկ անձի դեմ, ինքն իրեն հաշիվ չտալով, որ այդ անձի դեմ տարվող ատելության քարոզչությունը կամաակամա վերածում է վենդեթայի, վրիժառության: Դա կործանարար մոլորություն է, համախմբում է ոչ թե «հանուն», այլ՝ «ընդդեմ» գաղափարի շուրջ: 1996-ի ընդդիմության քարոզչությունը այդպիսին չէր, վսեմ նպատակի հետապնդում էր: Այժմ, ավաղ, ես այդպիսի վսեմ նպատակ չեմ տեսնում: 1996-ի ընդդիմադիրների ստեղծարար լիցքերն այսօր չկան, եւ դա անձամբ ինձ մեծ ցավ է պատճառում, քանզի ե՛ւ այն ժամանակվա, ե՛ւ այժմյան ընդդիմադիրների մեջ կան ինձ հոգեհարազատ մարդիկ: Բայց այն տարբերությամբ, որ այժմյան ընդդիմադիրների շարքերում հայտնվել են նաեւ իրենց գաղափարներով ու հետապնդած նպատակներով ինձ համար միանգամայն խորթ ուժեր ու գործիչներ, ովքեր ամենուին էլ փոքր պատասխանատվություն չեն կրում Հայաստանի այսօրվա ծանր սոցիալ-տնտեսական վիճակի համար: Ով-ով, բայց այդ մարդիկ բարոյական ո՛չ մի իրավունք չունեն վայնասուն բարձրացնելու մեր այժմյան դժվարությունների առթիվ: Կոկորդիլոսի արցունք թափելու եւ ամեն ինչ ներկա նախագահին վերագրելու այդպիսիների փարիսեցիությունն ինձ համար նողկալի է: 1996-ի սեպտեմբերի 5-ին Լեւոն Տեր-Պետրոսյանը լրագրողների հետ մի առիթով իր պատահական հանդիպման ժամանակ, հանպատրաստից մամլո ասուլիսում (որն առաջինն էր իր կառավարման հինգ տարիներին), լրագրողներից մեկի «5 տարին բավարա՞ր եք համարում բարեկեցիկ կյանք ապահովելու համար» հարցին պատասխանել է. «Ոչ, իհարկե, բավարար չեմ համարում: Հինգ տարում պետք է այս ողբալի վիճակը մի փոքր թեթեւացնենք, մի փոքր մարդկանց ավելի անհոգ դարձնենք: Կաթիլ-կաթիլ պետք է հավաքվի, ինձնից հետո դեռ տասը որեգիդենս էլ պետք է լինի, որից հետո երեւի մենք կհավասարվենք եվրոպական պետություններին»: Տեր-Պետրոսյանից հետո փոխվել է ոչ թե 10, այլ՝ մեկ որեգիդենս, «այս ողբալի վիճակը» իսկապես մի՝ փոքր թեթեւացել է, «կաթիլ-կաթիլ հավաքվում է»: Այդ դեպքում ի՞նչ բարոյական իրավունք ունեն դեռ երեկ Տեր-Պետրոսյանի կողքին կանգնած, իսկ այսօր ընդդիմության շարքերը համալրած ուժերն ու գործիչները՝ շահարկելու մեր կյանքի դժվարությունները: Քանի դեռ իրենք էին իշխանության մեջ՝ ժողովուրդը պետք է սպասեր, որ «դեռ տասը որեգիդենս էլ փոխվի», իսկ հիմա, երբ իրենք իշխանության մեջ չկան, սպասելը հակացուցվա՞ծ է, ամեն ինչ միանգամի՞ց պիտի արվի: Ինչպե՞ս: Ընդամենը Քոչարյանին տապալելո՞վ: Բայց չէ՞ որ դա անլուրջ հարցադրում է:

Ես ամենուին այն կարծիքին չեմ, որ մեր այժմյան վիճակը, 1996-ի համեմատությամբ, իդեալական է, որ այն ժամանակ ամեն ինչ վատ էր, իսկ հիմա, իբր, «ամեն ինչ լավ է»: Քա՛վ լիցի: Հիմա՛ էլ անցանկալի երեւույթներ կան, իշխանությունները զանազան սխալներ են անում, նաեւ՝ մեծ ու փոքր մեղքեր գործում: Այն ժամանակ էլ ընդդիմության մեջ առողջ ուժեր կային, կարող մարդիկ եւ կենսունակ մտքեր, որոնք անտեղի արհամարհվում ու անտեսվում էին: Հիմա՛ էլ այդպիսի բաներ կան, դժբախտաբար (սակայն՝ անհամեմատ ավելի փո՛քր չափերով): Իշխանություններն առաջվա պես չեն կարողանում վեր կանգնել հասարակության մեջ գործող քաղաքական ուժերին «յուրայիններ» եւ «հակառակորդներ» բաժանելու մտայնությունից, չեն ցուցաբերում բոլորին մեր պետական կառին «լծելու» կարողություն ու կամք: Բայց այդ ամենը, ըստ իս, ածման «հիվանդություններ» են: Չտեսնել, որ թշնամանքի ոգին էականորեն նվազել է, չհասկանալ, որ «հոկտեմբերի 27-ի» զարհուրելի ոճրագործությունից հետո իշխանություններից հսկայական ջանքեր պահանջվեցին այդ թշնամանքը հաղթահարելու, երկիրը բնականոն զարգացման հուն փոխադրելու համար, ինչը մեծապես խանգարեց սոցիալ-տնտեսական բազում ու բազմաթիսի հարցերի լուծմանը, կարճատեսություն է կամ քաղաքական չարամիտ դիտավորություն: Այժմ, նախագահական ընտրությունների մոտենալուն զուգընթաց, այդ չարամտությունը կրկին գլուխ է բարձրացնում, այդ թվում նաեւ 1996-ի իրավիճակի հետ անհարկի համեմատությունների տեսքով: Ահա՛ ինչու գտնում եմ, որ անհրաժեշտ է ո՛չ թե ծեւական, այլ իրատեսական հայացք նետել մեր ոչ հեռու անցյալին՝ ապագան չվտանգելու համար:

ՌԱՖԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Հայացք անցյալին՝ ապագան չվտանգելու համար

(թերթելով «Ազգի» հին համարները)

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

«Անին» կայացած հյուրանոց է

Հավաստիացնում է մարկետինգի բաժնի պետը

Իր մեծությամբ եւ վարկանիշով «Անին» ավանդաբար համարվել է Հայաստանի երկրորդ հյուրանոցը: «Անին» եւս, ինչպես «Արմենիան», սեփականաշնորհվեց 1998-99 թթ., եւ նոր սեփականատերերը նույնպես ամերիկահայեր են: Սեփականաշնորհմանը հաջորդող տարիները հյուրանոցի համար վերակառուցման տարիներ էին: «Անի ինտերիորայզիս» ընկերության կողմից մասնավորեցվելուց հետո 300 հյուրանոցային մեկ եւ երկու տեղանոց առաջին կարգի, լյուքս եւ ադարտամենտ կոչվող համարներն ընդարձակվեցին՝ դառնալով առայժմ 149 մեկ եւ երկու տեղանոց էկոնոմ, մեկ եւ երկու տեղանոց բիզնես համարներ: Ինչո՞ւ առայժմ, որովհետեւ դեռեւս ընթացքի մեջ է նոր լյուքս եւ ադարտամենտ համարների շինարարությունը: Դրանք, ինչպես տեղեկացանք հյուրանոցի մարկետինգի բաժնի պետ Նելլի Ալեքսանյանից, հավանաբար կլինեն 10-րդ հարկում, որտեղից հիանալի տեսարան է բացվում: Այստեղից երեւում են ամբողջ Երեւանը, Մեծ ու Փոքր Արարատները:

Մարկետինգի բաժնի պետի հավաստմամբ, «Անին» իր հիմնադրման առաջին իսկ տարվանից (1970 թ.) մեծ ճանաչման է արժանացել: Տկն Ալեքսանյանն ափսոսանքի է ընդունվել հյուրանոցում բացման օրվանից, եւ դա ասաց որպես ականատես: Այդ հանգամանքը նա բացատրեց «Անիի» հարմար դիրքով: Հյուրանոցը գտնվում է քաղաքի կենտրոնում, օպերայի թատրոնի հարեւանությամբ: Հյուրերը կարող են իջնել եւ զբոսնել մայրաքաղաքի փողոցներում, ինչը կարեւոր հանգամանք համարվեց: Բացի այդ, առաջիկա 1-1,5 տարիների ընթացքում բակի կողմից կկառուցվեն նոր ծածկած լողավազան, մարզասրահ, ֆիտնես կենտրոն եւ կանգառ ավտոմեքենաների համար: Նելլի Ալեքսանյանը հատուկ ընդգծեց հյուրանոցի անձնակազմի բարձրակարգ սպասարկման հանգամանքը: Այս ամենը, գումարած «Անիի» որպես հյուրանոց կայացած լինելը, հնարավորություն է ընձեռել դիմակայելու նորակառույց եւ ժամանակի պահանջներին համապատասխան այլ հյուրանոցների մրցակցությանը:

Հյուրանոցի ծանրաբեռնվածությունն այս տարի փոքր-ինչ ցածր է նախորդ հոբելյանական տարվանից: Սակայն մարկետինգի բաժնի պետը դժգոհ չէր այս տարվա ծանրաբեռնվածությունից: Տարեկան կտրվածքով դա մոտ 50 տոկոս է կազմում: Այս տարվա համար Նելլի Ալեքսանյանը հետաքրքրական առանձնահատկություն է նկատել: Եթե անցյալ տարի Հայաստան այցելող զբոսաշրջիկները հիմնականում սփյուռքահայեր էին, արդա այս տարի պատկերն այլ է: Ավելացել է օտարերկրացի գերմանացի, անգլիացի, ֆրանսիացի, ամերիկացի զբոսաշրջիկների հոսքը: Իտալացիների եւ Իսրայելից եկած զբոսաշրջիկների մեծ հոսք կա: Տկն Ալեքսանյանը սա կարեւոր միտում համարեց, ընդգծելով. «Էթնիկ տուրիզմով հեռու չենք գնա»: «Ինչպե՞ս ազդեցին սեպտեմբերի 11-ի իրադարձությունները Հայաստանում զբոսաշրջության զարգացման վրա» հարցին, նա պատասխանեց, որ դրանք, բնականաբար, իրենց բացասական ազդեցությունն ունեցան: Մարդիկ մինչեւ հիմա էլ զգուշանում են իրենց երկրից դուրս գալ: Այդուհանդերձ, ինչպես «Անին», այնպես էլ մյուս հյուրանոցները պատրաստվում են ընդունել զբոսաշրջիկների նոր խմբերի:

Մեզ հետաքրքրող վերջին հարցը վերաբերում էր զբոսաշրջության եթե ոչ ամենակարեւոր, արդա կարեւոր հարցերից մեկին՝ հյուրանոցային համարների գներին: «Անիի» մեկ համարի մեկ օրվա նվազագույն գինը 90 դոլար է, առավելագույնը՝ 170 դոլար (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱԶԳ

Միջազգային

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի շինարարությունը կսկսվի գարնանը

Ալիեւ-Մեզեր, Ալիեւ-Շեւարդնաձե, Մեզեր-Շեւարդնաձե հանդիպումներ Բաքվում

Սեպտեմբերի 18-ին Ադրբեջանի մայրաքաղաքից 35 կմ հարավ գտնվող, մերձկասպյան Սանգաչալ տերմինալում հանդիսավորությամբ սկսվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան 1760 կմ երկարությամբ նավթատարի շինարարությունը, որի ընդհանուր արժեքը մոտ 3 մլրդ դոլար է: Մոսկովյան «Վեդոմոստի» թերթը նշում է, որ խողովակաշարի շինարարությունը կսկսվի միայն 2003 թ. փետրվար-մարտ ամիսներին, կավարտվի 2004 թ. վերջերին, իսկ 2005 թ. գարնանն առաջին նավթը կհասնի միջերկրածովյան Ջեյհան նավահանգիստը: Ենթադրվում է այս կառուցվելիք խողովակաշարով միջազգային շուկաներ առաքել տարեկան 50 մլն տոննա կասպյան նավթ: Ներկայումս Ադրբեջանը տարեկան արտահանում է մոտ 15 մլն տոննա՝ հիմնականում Բաքու-Նովոռոսիյսկ եւ Բաքու-Սուփսա խողովակաշարերով: Ակնկալվում է, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարով կհոսի նաեւ Ղազախստանի նավթը՝ այսպիսով լրացնելով խողովակաշարի լրիվ ծանրաբեռնվածությունը:

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նախագծի մասնակիցներն են անգլո-ամերիկյան «Բրիթիշ փեթրոլեումը» 32,21 տոկոս, Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը՝ 25, նորվեգական «Statoil»-ը՝ 9,58, ամերիկյան «Unocal»-ը՝ 8,9, թուրքական TPAO-ն՝ 7,55, իտալական ENI-ն՝ 5, ճապոնական «Itocu»-ն՝ 3,4, սաուդյան «Amerada Hess»-ը՝ 2,36: Սպասվում է, որ մնացած 5 տոկոսը կստանա ֆրանսիական «Total Fine Elf»-ը:

ՌԴ արտգործնախարարի տեղակալ Վ. Կալյուժնին «Վեդոմոստի» թերթին ասել է. «Անշուշտ, Բաքու-Թբիլիսի-Ջեյհանն ուղղակի մեր մրցակիցն է, բայց դա մենք վատ չենք համարում: Հակառակը՝ «Տրանսնավթի» համար խթան կլինի՝ սահմանել առավել հիմնավորված սակագներ»: «Մեր ընկերությունը չի երկյուղում մրցակցությունից: Նախ՝ Ադրբեջանն այսօր մեծ ծավալներով նավթ չի արդյունահանում եւ, մեր կարծիքով, այդ նավթատարի տնտեսապես հիմնավորված լինելը շարունակում է մնալ հարցականի տակ: Բացի այդ՝ մեր սակագները կարող են լինել ավելի գրավիչ», ասել է «Տրանսնավթի» փոխնախագահ Ս. Գրիգորեը:

Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի հանդիսավոր բացմանը մասնակցել են Ադրբեջանի, Վրաստանի եւ Թուրքիայի նախագահները, ԱՄՆ էներգետիկայի նախարար Սփենսեր Աբրահամը, բարձրաստիճան այլ անձինք: Ալիեւ-Աբրահամ հանդիպման ընթացքում, որը տեղի է ունեցել սեպտեմբերի 17-ին, ԱՄՆ էներգետիկայի նախարարը, ըստ «Թուրան» գործակալության, ասել է, որ Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը ԱՄՆ նավթային ռազմավարության «կարեւորագույն հաստատն է», «այդ ռազմավարությունը 2001 թ. մշակվել է փոխնախագահ Չեյնիի ղեկավարությամբ»: Ըստ Աբրահամի, այս նավթատարի նախագծի իրականացումը մեծ մասամբ հնարավոր է դառնում Հեյդար Ալիեւի ջանքերով. Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը կամրացնի «Ադրբեջանի անկախության երաշխիքները»: Հեյդար Ալիեւը նշել է, որ Բաքուն պատրաստ է Վաշինգտոնի հետ բազմակողմ համագործակցության, «միշտ ԱՄՆ-ի հետ լինելու է նույն դաշինքի մեջ, քանի դեռ միջազգային ահաբեկչությունն արմատախիլ չի արվել»:

Եղբայրական երկու հանրապետությունների՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը, եթե վստահենք Բաքվի «Զերկալո» թերթին, բնավ էլ չի անցել եղբայրական մթնոլորտում: Մասնավորապես, Ահմեդ Նեջդեթ Սեզերը ներկայացրել է փաստարկներ, համաձայն որոնց Ադրբեջանում առկա բյուրոկրատական քաշքշուկների պատճառով թուրք ձեռներեցները չեն կարողանում գործունեություն ծավալել: Անցյալ տարի թուրք-ադրբեջանական առեւտրաշրջանառությունը նվազել է 15 տոկոսով, տասնյակ թուրքական ֆիրմաներ սնանկացել եւ լքել են Ադրբեջանը: Սեզերը հույս է հայտնել, որ իրականություն կդառնա նաեւ Բաքու-Թբիլիսի-Երզրում գազատարի կառուցումը: Այս ծրագիրը, ինչպես հայտնի է, հետաձգվել է անորոշ ժամանակով, քանի որ թուրքական կողմը չի ցանկանում ներմուծել ադրբեջանական թանկ գազը:

Ռուս-վրացական գերլարված հարաբերությունների ֆոնին ուշագրավ է Սեզեր-Շեւարդնաձե հանդիպումը: Տարբեր առիթներով թուրք բարձրաստիճան պաշտոնյաները հայտարարում են, թե Վրաստանի խնդիրները Թուրքիայի խնդիրներն են: Կսատարի՞ Անկարան Թբիլիսիին, եթե ռուսական զորքերը ռմբահարեն Վրաստանը, ցույց կտա ժամանակը: Մենք միայն կարող ենք փաստել՝ Վրաստանի հասցեին հնչող ռուսական սպառնալիքներն Անկարայում բարեխղճորեն քննարկվում են:

Ի դեպ, երեկ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի ադրբեջանական հատվածի շինարարության տենդերում հաղթող ճանաչված հունական CCIC ընկերությունը տարածել է հաղորդագրություն՝ ժխտելով հայկական լոբբիի կապը ընկերության հետ: Համաձայն մամլո հաղորդագրության, որից հատվածներ է մեջբերել Բաքվի «Էխո» թերթը, CCIC-ն հունական ընկերություն է եւ պատկանում է երկու արաբների՝ Սաբբահ եւ Ղուրի ձեռներեցներին: CCIC-ն չի թաքցրել, որ ընկերության 40 հազար աշխատակիցներից միայն հինգն է հայ, իսկ ինչ վերաբերում է Գեւորգ Թորոյանին, որի շուրջ ադրբեջանական մամուլն աղմուկ է բարձրացրել, ապա նա վերջին տասը տարիներին չի աշխատում ընկերությունում:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Ադրբեջան - Պակիստան ռազմական համագործակցության պայմանագիր

Այցելությամբ Կարաչի քաղաքում գտնվող Ադրբեջանի պատգամավորության նախարար Սաֆար Աբիեւն իր պակիստանցի գործընկեր Համիդ Նավազ Խանի հետ կնքել է ադրբեջանա-պակիստանյան ռազմական համագործակցության պայմանագիր, հաղորդում է Ֆրանսպրեսը: Մինչ այդ Ադրբեջանը նմանօրինակ պայմանագիր է կնքել Թուրքիայի հետ: Բաքու-Իսլամաբադ պայմանագիրը վերաբերում է երկու պետությունների ռազմական համագործակցությանը հետեւյալ ոլորտներում՝ համատեղ զորավարժություններ, տեղեկատվության եւ անձնակազմի փոխանակում, գործակցության պատգամավորություն գիտության եւ արդյունաբերության ոլորտում:

ԱՄՆ-ը ցամաքային գործողություն կձեռնարկի Եմենում

Ամերիկյան հետախուզական ծառայությունների աղբյուրներ վկայակոչելով, ABC հեռուստաընկերությունը հաղորդել է, որ ԿՀՎ-ն եւ Պենտագոնը պատրաստ են Եմենում անցկացնելու լայնածավալ գաղտնի գործողություն: Ըստ Ռոյթեր գործակալության, վերջինիս նպատակն է գտնել «Ալ Ղաիդայի» ահաբեկիչներին, որոնք հավանաբար Եմեն են անցել Աֆղանստանից:

Հաղորդվում է, որ Եմենի ափերի մոտ է ԱՄՆ ռազմածովային ուժերի «Բլու Վուդ» դեսանտային նավը, որը կարող է ծովային ռազմակայան ծառայել մոտակա Ջիբուտիում տեղաբաշխված հատուկ ուժերի համար: ABC-ի ստացած տվյալներով, Ջիբուտիում ներկայումս կան 800-ից ավելի զինվորներ եւ մեկ տասնյակ հատուկ ուղղաթիռներ: Զորաբաժնի մեջ է մտնում ամերիկյան բանակի «Դելտա» գաղտնի ստորաբաժանումը, որն արտերկրում զբաղվում է հակաահաբեկչական գործողություններով: Ամերիկացի զինվորները, որոնց ներկայությունը Ջիբուտիում մինչեւ օրս գաղտնի էր պահվում, տեղաբաշխված են ֆրանսիական ռազմակայանում: Գործողությունը ղեկավարում է ԿՀՎ-ն: Պենտագոնը առայժմ որեւէ ձեւով չի մեկնաբանել լրատվամիջոցների հաղորդումները:

Վերջերս պատշգամբային Վաշինգտոնը քանիցս երկյուղներ է արտահայտել, թե «Ալ Ղաիդայի» ահաբեկիչներից շատերը կարող են ապաստանած լինել Եմենում՝ բեն Լադենի գերդաստանի հայրենիքում:

Լուկաշենկո. «Ռուբլին ընդունելի է միայն իրավահավասար հիմունքներով»

Ռուսաստան-Բելառուս դաշնային պետությունում 2005 թ. ռուսական ռուբլին ընդհանուր արժույթ դարձնելու կապակցությամբ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն ռուսական լրատվամիջոցների ներկայացուցիչներին երեկ հայտարարեց, որ իր երկիրը դրան կհամաձայնի միայն իրավահավասար պայմանների դեպքում: Բելառուսն առաջարկում է ստեղծել դաշնային պետության էմիսիոն կենտրոն, որի մեջ կմտնեն Ռուսաստանի Կենտրոնական բանկը, Բելառուսի Ազգային բանկը եւ Միջբանկային արժութային խորհուրդը: Մինչդեռ Ռուսաստանն ուզում է գերիշխել:

«Մեզ առաջարկեցին ռուսական ռուբլին դարձնել ընդհանուր արժույթ, էմիսիոն կենտրոն դարձնել Կենտրոնական բանկը, իսկ Ազգային բանկը վերածել դրա մասնաճյուղի», ասաց Լուկաշենկոն, պահանջելով իրավահավասարություն: Միաժամանակ նա խոստովանել է, որ միասնական արժույթն անխուսափելի է: «Մենք այլ ուղի չունենք: Տնտեսությունը մեզ դրդում է միավորել Բելառուսի եւ Ռուսաստանի ֆինանսական համակարգերը», ընդգծել է Լուկաշենկոն, չբացառելով նաեւ Արեւմուտքի տնտեսական օգնության ավելացման հնարավորությունը:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ռուսները Շեւարդնաձեին համեմատում են մոլլա Օմարի հետ

«Ոչինչ չգիտեմ Գելաեւի գտնվելու վայրի մասին, երբեք չեմ հանդիպել նրան»

Վլադիմիր Պուտինը Սոչիում հանդիպելով տեղի լրագրողներին հայտարարել է, որ բավարարված չէ էդուարդ Շեւարդնաձեի պատասխան նամակից: «Մենք վրացական ղեկավարությունից երաշխիքներ էինք խնդրել, որ Վրաստանից ռուսական տարածքներ չեն իրականացվի ավազակային հարձակումներ: Նման երաշխիքներ չենք ստացել», նշել է ՌԴ նախագահը: Երեքշաբթի երեկոյան Պուտինը Սոչիի իր նստավայրում ընդունել է ՌԴ դաշնային սահմանապահ ծառայության տնօրեն Կոնստանտին Տոցկուն եւ ՌԴ ՀՈՒ գլխավոր շտաբի պետ Անատոլի Կվաշնինին: Ըստ ՌՏՌ ռուսական հեռուստաընկերության, Պուտինը Տոցկուն եւ Կվաշնինին հանձնարարել է զեկուցել ռուս-վրացական սահմանի ամրապնդման համալիր ծրագրի շուրջ:

Հանդիպումից հետո Տոցկին լրագրողներին ասել է. «Ռուսական կողմը չափազանց անհրաժեշտ է համարում Վրաստանին սահմանակից շրջաններում 20-40 կմ լայնությամբ անվտանգության գոտու ստեղծումը: Այդպիսի գոտու ստեղծման խնդիրը եւ դրա գործողության ռեժիմը, անշուշտ, պետք է քննարկենք մեր վրաց գործընկերների հետ»: Խիստ տոնով է արտահայտվել Կվաշինը՝ վրաց ղեկավարությանը համեմատելով թալիբների հոգեւոր առաջնորդ մոլլա Օմարի հետ: Նյու Յորքում գտնվող ՌԴ արտգործնախարար Իգոր Իվանովը, ըստ «Նովոստի» գործակալության, կտրականապես հերքել է էդուարդ Շեւարդնաձեի ենթադրությունը, թե իբր ԱՄՆ-ն եւ Ռուսաստանը միմյանց միջեւ փոխանակել են Վրաստանն ու Իրաքը, այսինքն՝ ԱՄՆ-ն ռմբահարելու է Իրաքը, Ռուսաստանը ձայն չի հանում եւ ռմբահարում է Վրաստանը, ԱՄՆ-ն ձայն չի հանում: «Շեւարդնաձեն, թվում է, մտածում է «սառը պատերազմի» տարիների չափանիշներով», ասել է Իվանովը:

Ինքը՝ Շեւարդնաձեն, Բաքու մեկնելու նախօրեին Վրաստանի պետհեռուստատեսությամբ հայտարարել է, որ ոչ մի անգամ եւ ոչ մի տեղ չի ասել, թե Ռուսլան Գելաեւը հրեշակ է: Ռուսական հետախուզական ծառայությունները շարունակում են պնդել, թե Գելաեւի ավազակախումբը կրկին փորձում է Պանկիսից անցնել Կոդոր՝ Աբխազիա: Շեւարդնաձեն ասել է. «Իրականում Գելաեւին չի կարելի չկրված անձնավորություն համարել: Մի՞թե հնարավոր չէ պատկերացնել մարդուն ահաբեկիչ կամ գող, որը լինի միաժամանակ կրված անձնավորություն: Ոչինչ չգիտեմ Գելաեւի գտնվելու վայրի մասին, երբեք չեմ հանդիպել նրան»:

Ճապոնիայի վարչապետը խոստացավ օգնել ԿԺԴՀ-ին

Երեկ Կորեական թերակղզում տեղի ունեցավ խոշոր իրադարձություն՝ բացվեց երկու Կորեաները միացնող սահմանադուռը: Թերակղզու արեւմտյան ափին գտնվող Դորասանի սահմանադռան բացումը խորհրդանշում է երկու Կորեաների միջեւ երկաթուղային ու ճանապարհային կապի վերականգնման սկիզբը:

1953 թ. կորեական պատերազմից ի վեր թերակղզին արեւելքից արեւմուտք կիսող ապառազմականացված գոտին սառը պատերազմի մնացուկ է, ունի 250 կմ երկարություն եւ 4 կմ լայնություն: Ֆրանսպրեսը տեղեկացնում է, որ այդ տարածքն անբնակ է եւ մինչեւ օրս ականապատված: Նաեւ հաղորդվում է, որ ԿԺԴՀ-ի եւ Հարավային Կորեայի զինվորականներն այսօրվանից սկսելու են տարածքի ականազերծումը:

Սահմանադռան բացմանը նախորդել էր ճապոնիայի վարչապետ Յունիչիրո Կոյիզումիի այցը Փենյան: Այցը պատմական էր ոչ միայն 2-րդ աշխարհամարտի ավարտից հետո առաջինը լինելու, այլեւ այն պատճառով, որ ԿԺԴՀ-ն եւ ճապոնիան պաշտոնապես չունեն դիվանագիտական հարաբերություններ:

Միջազգային դիտորդներն արձանագրում են ԿԺԴՀ-ի ղեկավար Կիմ Չոն Իրի անսովոր վարմունքը, որը ճապոնիայի վարչապետից ներողություն խնդրեց 1977 եւ 1983 թթ. ԿԺԴՀ-ում 11 ճապոնացիների առեւանգման կապակցությամբ: «Ես ուզում եմ ներողություն խնդրել: Հանցագործները պատժվել են», հայտարարեց Կիմ Չոն Իրը:

Իր հերթին Կոյիզումին «խոր ափսոսանք» հայտնեց եւ ներողություն խնդրեց 1910-1945 թթ. ճապոնիայի կողմից Կորեական թերակղզու օկուպացման համար, որն «ահավոր վնասներ եւ տառապանքներ պատճառեց» կորեացիներին: Ճապոնիայի վարչապետը խոստացավ տնտեսական օգնություն հատկացնել ԿԺԴՀ-ին: Օգնության գումարի չափը, ըստ պաշտոնական հաղորդագրության, քննարկվելու է երկկողմ հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակներում:

ԱՄՆ-ում «չարիքի առանցքի» երկրների թվին դասվող ԿԺԴՀ-ն, որպես բարի կամքի արտահայտություն, խոստացավ «անժամկետ» սառեցնել իր բալիստիկ հրթիռների փորձարկումները: Ըստ «Լիբերասիոն» թերթի, Կիմ Չոն Իրը ճապոնիայի վարչապետին նաեւ խնդրել է ԱՄՆ-ին հայտնել, որ «դուռը բաց է երկխոսության համար»: Նույն թերթի ստացած տեղեկությունների համաձայն, ԿԺԴՀ մեկնելու համար Կոյիզումին նախօրոք ստացել է Մ. Նահանգների հավանությունը, որպեսզի հարաբերությունների կարգավորում սկսի տնտեսական օգնության խոստումների դիմաց: Մեկուսացման հետեւանքով ծանր կացության մեջ հայտնված ԿԺԴՀ-ն անկարող է հրաժարվել օգնությունից:

Պ. Բ

Ստակոյտ

Վերադարձ... իր լսարան

Երբ հարուստ ես հիշողություններով

... Այստեղ կարելի է ձեր կյանքի լավագույն տարիները: Իսկ ե՞ս... ես... ես ի՞նչ... ես միայն կմնամ ձեր հիշողությունների մեջ, եթե, իհարկե, դուք ցանկանաք: Բայց ո՞վ գիտե...»:

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Նա վեր էր սովորականից, փառից, կոչումներից ու ամեն գայթակղությունից: Որովհետեւ արդեն իսկ օժտված էր. օժտված էր շնորհով՝ ի վերուստ: Այդ շնորհը նրա անսովոր հոգին էր, անկրկնելի մի բեկոր ոտկված աստվածային կայծից՝ իր անթափույց ոյծառ բոնկումներով: Դա մի հզոր ներին էներգիա էր, որ հեռանալուց հետո էլ իր անբերեւույթ գոյությամբ շարունակում է ադրել արդեն իբրեւ հիշողություն:

Հիշողությունների մթնոլորտում էր շաբաթ օրը Երեւանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի լսարաններից մեկը, որ այսուհետեւ կկրի Լեւոն Ներսիսյանի անունը: Մի քանի ժամանակ առաջ սովորական, անշուք սենյակն այդ օրը բոլորովին այլ կերպարանք ու ներշնչանք ուներ եւ սա նրանից չէր միայն, որ բարեկարգ էր, կոկիկ ու հաճելի կահավորված, նաեւ ոգեւորված էր հիշատակ հարգողների, հավերժացնողների գոյությամբ: Ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանի մտահղացմամբ ստեղծված այս բարի ավանդույթը բանասիրական ֆակուլտետում լավ շարունակություն է ունենում: Պ. Սեւակի, Գ. Սեւակի, Էդ. Ջրբաշյանի, Ս. Մկրյանի անվ. լսարաններին ավելացավ Լեւոն Ներսիսյանի անվ. լսարանը: Շուտով սփյուռքահայ ուսանողների ջանքերով ֆակուլտետում կբացվի Վազգեն Գեւորգյանի անվ. լսարանը:

Անսովոր ոգեւոր են երբեմն կյանքում լինում, երբ տարիները տեղաշարժվում են, եւ մարդկային հիշողությունն առաջացնում է, որ «գուցե մարդը հենց նա է, որ իր հետեւից հետք է թողնում»: Օրը, լսարանը, ներսիսյանական էին, նրանով էին լցված, այստեղ նրա մեծադիր նկարներն էին, իր գրադարանը, իր դուստրը: Մարիան եւ նրան սիրող մարդիկ:

ՐԵՆԱՐԿ ԷՍՈՅԱՆ. «Բազմաշնորհ եւ հանճարեղ մարդ, որի մեջ զարմանալիորեն գիտելիքների անսպառ ոլորտը միացած էր այն եզակի փայլին, որ Աստված կամ տալիս է, կամ չի տալիս: Նա բացառիկներից էր, որի մեջ Աստված փայլ էր դրել, մեծ հմայք, նրա էությունն անասելի մարդասեր էր, բարոյապես կատարյալ:

Յուրաքանչյուրն իր ճակատագիրն ունի: Նա ծնված չէր գրելու համար: Այդ գրքերը նա մեր մեջ է գրել: Մեր սերունդը պարտական է նրան: 60-ականների բումը, որ եղավ արվեստի մեջ, ազատախոհության այդ շարժման առաջին շարքերում Լեւոն Ներսիսյանն էր: Մարդկային հոգու մի մասն անվան մեջ է ապրում: Դրա համար է մարդն ուզում անուն թողնել, աշխարհում ներկա լինել հիշողությամբ»:

ԱՐԵՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ. «Սա ինչոր տեղ ուխտատեղի կլինի՝ հիշելու ոչ միայն Լեւոն Ներսիսյանին, այլեւ մեր բոլոր ուսուցիչներին: Գիտելիքների անսպառ պաշար ուներ նա, ամենատարբեր տեղերից գալիս էին նրան լսելու: Դասախոսություն չէր կարդում, նա խաղում էր այնպես, ինչպես իր աստվածաշնորհ հայրն էր հայ թատրոնի բեմում խաղում: Դասախոսի, ուսուցչի, մարդկային ամենավեհ ու պայծառ նկարագիրն ուներ Լեւոն Ներսիսյանը»:

ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ. «Տաղանդ կա, որ ամբողջովին լուսավոր է, պայծառ: Իր շուրջը նա ստեղծում էր ոչ միայն հուզական մթնոլորտ, այլեւ գեղեցկության, մարդկության, շիտակության շեղ հանդես: Անհնար էր նրան ճանաչել, նրա կողքին լինել ու նրանից հետո որեւէ վատ բան անել կամ մտածել: Ոչ միայն իր խոսքով, այլ իր կերպարով, իր էությամբ, իր գոյությամբ էր նա մարդկանց կրթում, մարդկանց մարդկայնացնում, քչերն են մեզ կյանքում հանդիպում այդպիսին»:

ԵԼԵՆԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. «Լեւոն Ներսիսյանը ճակատագրի շնորհ էր, բացառիկ ու անկրկնելի անհատականություն, որ բոլորովին այլ կրիտերիաներ ու մասշտաբներ ուներ, մտածողությամբ՝ ասպես եւ մարդկային հարաբերությունների մեջ՝ ասպես»:

ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ. «Որպես երեւույթ նա ստեղծում էր մթնոլորտ: Այդ մթնոլորտում չէր կարելի մնալ պասիվ, անտարբեր, նա ստեղծում էր շատ հետաքրքիր լարվածություն, սրություն հարաբերությունների մեջ, ամեն ինչ արժեւորվում էր այդ մթնոլորտում: Ահա նա չկա եւ այդ մթնոլորտն էլ չկա: Բայց հիմա այնպիսի տպավորություն ունեմ, որ նա վերադարձավ...»:

Վերադարձ էր օրը, եւ Լեւոն Ներսիսյանը վերադարձավ այնտեղ, ուր իր երկրային կյանքի մեծ մասն էր անցկացրել, կրթել ու հոգեւոր ճանապարհ բացել շատերիս համար: Ու զուր էր Լեւոն Ներսիսյանի դուստրը տագնապում, որ անողոք հիվանդությունն ավերել է սիրելի ուսուցչի այնքան հմայիչ կերպարը: Մարիան ներկայացրեց այն տեսարանը, ուր իր հայրը՝ վերջին անգամ զրուցեց մեր բոլորի հետ՝ իր խոսքերն ուղղելով նաեւ տարաստիյուռ հայ երիտասարդությանը: Ու մենք շնորհակալ ենք այս տեսարանի համար, որ չնայած շատ հուզիչ լինելուն, բայց եւ համոզեց, որ մեծերը հեռանում են կանգնած: Ու նա հեռացավ հոյակապ, իր ողջ շռայլությամբ, չնայած ծերերի ու ծայնի դողին, բայց աչքերի շեղ փայլով, խոսքի նույն ոգեղենությամբ ու կրակով, անինքնադավաճան, իրեն հավատարիմ, ինչպես ինքն էր մեզ պատգամում...

«Նավը պիտի կանգուն մնա, իսկ կանգուն մնալու համար պետք է, որ նա խարիսխ ունենա: Ոչինչ, որ ես ժանգոտած խարիսխ եմ, բայց խարիսխ եմ: Ես եկել եմ այստեղ՝ ասելու նրանց, որ ոչ մի տեղ չեմ գնա, ոչ մի աշխատանքով, սորբոններով ինձ գայթակղեցնել հնարավոր չէ, որովհետեւ քանի որ ես դեռ Հայաստանում եմ, նավը դեռ ընկղմված չէ, որովհետեւ խարիսխ եմ ես...

Չեզանից ոմանք Հայաստան երկիրը բնավ չեն տեսել: Դուք սիրելիներս, նոր սերնդի սփռված հայեր, ուր որ կլինեք, վաղ թե ուշ ճանապարհին ջրատարը պետք է բերի ձեզ այստեղ: Տեսել եք դուք Հայաստանը, թե չեք տեսել, պատկերացնում եք՝ ինչ երկիր է դա, նշանակություն չունի, Արգիշտի թագավորին եք ընդունում՝ որպես առաջին հայ թագավոր, ես չեմ ընդունում, նշանակություն չունի, նիկոմեդիացի ես, պոլսեցի, Թիֆլիսից, Սամբուլից, Կեսարիայից, Շուշիից, թե Ցյուրիխից, մեծահարուստ ես, թե աղքատ, նշանակություն չունի, այդ բոլորը ես եմ եւ դուք, կտեսնվենք մենք, թե չենք տեսնվի, նշանակություն չունի, որովհետեւ երկրի ոգիները միշտ նույնն են, նրանք մեզ համար եւ կուրախանան, եւ կխրեն: Այս Հայք, այս Արմենիա աշխարհը տոկուն մնացած, չէ թե այս կամ այն եկեղեցուն պատկանող, ոչ կաթոլիկ են, ոչ ուղղափառ, ոչ բուդդայական են, ոչ կրիշնայական, այլ անհայտ մի ցեղ, անհայտ ոգիների, որ մեզ պահում է, միացնում ու կպահի այնքան ժամանակ, ինչքան ձեր նման ունկնդրողներ եւ ինձ նման այսպես խոսողներ կան: Ինչքան դա կտեւի, չգիտեմ: Մեկ սերունդ հանեք մեջտեղից: Շարժման սկզբից ասել եմ մեկ սերունդ կորցնելու ենք: Բայց այդ կորուսյալ սերնդի մեջ կգտնվեն մարդիկ, որոնք կվերակենդանացնեն թե ինձ ու քեզ, թե անհայտ, առայժմ անհայտ մնացած մեր երկրի ոգիներին...»:

ՄԵԼԻՆԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հայտարարություն

Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում (փ. Վազգեն Սարգսյան 7, «Արմենիա» հյուրանոցին կից) 2002 թ. սեպտեմբերի 22-ին, կիրակի, ժ. 19:00-ին տեղի կունենա Հայաստանի պետական կամերային նվագախմբի (ՀՊԿՆ)

2002-2003 թթ. համերգաշրջանի
բացման համերգը

գեղարվեստական դեկավար եւ գլխավոր դիրիժոր

ԱՐԱՄ ՂԱՐԱԲԵԿՅԱՆ

Համերգի մենակատարն է միջազգային ճանաչում ունեցող դաշնակահար **Ավետիս Գույումջյանը** (Վիեննա), որը հանդես կգա Յոհաննես Բրամսի Դաշնամուրային կվինտետ F Minor, Op. 34 ստեղծագործության կատարմամբ, որի նվագախմբային տարբերակը Հայաստանում կատարվում է առաջին անգամ:

Ծրագրում.

Արկանջելո Կորելլի - Կոնչերտո Գրոսսո Op. 6 No. 2
Մայքլ Թիփեթ - Կոնցերտ-ֆանտազիա Կորելլի թեմաներով

Հայաստանում կատարվում է առաջին անգամ

Հայաստանի պետական կամերային նվագախմբի հովանավորն է
«Վալէ եւ Թամար Մանուկեան»
բարեգործական միությունը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՈՒԼ

Ստոմի ճանապարհը

Ո՞վ է նա՝ կինոյում եւ կինոյից դուրս

Այս օրերին միջազգային (կանադական, ֆրանսիական, ռուսաստանյան եւ այլն) մամուլը բառացիորեն ողողված է Ստոմ Եղոյանի «Արարատ» կինոնկարի վերաբերյալ հոդվածներով: Եվ եթե դրանցում որոշ հատվածներ՝ հատկապես կինոնկարի սյուժեի հետ կապված, կրկնում են իրար, ապա չի կարելի նույնն ասել մյուս պարբերությունների մասին, որոնցում յուրաքանչյուր հեղինակ իր ինքնուրույն մոտեցումն է արտահայտում եղոյան երեւույթի մասին: Մեր ձեռքի տակ գտնվածներից մեկում լրագրող Թիմոթի Թեյլորը գրում է.

«Ամեն ինչ սկսվեց մոտ 15 տարի առաջ Տորոնտոյի հայկական համայնքի կենտրոնում Եղոյանի երկարամյա պրոդյուսեր Ռոբերտ Լանտոսի բացման խոսքերից, որոնցում նշելով, որ «Շինդլերի ցուցակը», «Ֆինզի-Կոնտինիսի պարտեզը» եւ «Գրավառուն» ֆիլմերից հետո ինքը պատրաստվում է թողարկել «Արեւի լույսը» ֆիլմն իր ժողովրդի՝ հունգարացի հրեաների մասին, նա ասել է. «Երբ Ստոմը գգա, որ, իրոք, ցանկանում է իր պատմությունը պատմել, ես թիկունք կկանգնեմ նրան: Ես կհոգամ, որ այդ ֆիլմն անպայման նկարահանվի»:

Կանադայի Վիկտորիա արվարձանային քաղաքում ապրող Եղոյանն ընդունեց «մարտահրավերը»: Նա 1978-ին էր Տորոնտո տեղափոխվել եւ ներգրավվել Տորոնտո համալսարանում «Հայ ուսանողների ասոցիացիայի» գործունեության մեջ, իսկ տարիներ անց իր առաջին ֆիլմի նկարահանումների առիթով հանդիպել ապագա կնոջը՝ Արսինե Խանջյանին, որն իր հետ բերելով պատմական ու մշակութային ազգային արժեքների մի ամբողջ հարստություն, արթնացրել էր նրանում «ո՞վ եմ ես» սկզբունքային հարցը, որը դառնալու էր «Արարատի» գլխավոր սյուժեն, եւ որի պատասխանը նա տալու էր յուրահատուկ հմտությամբ:

Ֆիլմի պատմությունը հիմնականում 3 գլխավոր կերպարների շուրջ է պտտվում: Անին (Արսինե Խանջյան) արվեստաբան է, որի Արշիլ Գորկու մասին գրած ուսումնասիրությունը ֆիլմի պետք է վերածվի, էդուարդ Սարոյանը (Ազնավուր) ռեժիսոր է, որը ֆիլմ է նկարահանում Հայոց ցեղասպանության մասին եւ Մարտինը (Բրուս Գրինվուդ)՝ վերոհիշյալ ֆիլմի գլխավոր դերասանը, որը դոկտ. Կլարենս Աշերի պատմականորեն իրական կերպարն է մարմնավորում: Նրա օրագիրն այդ օրերի ողբերգությունների ամենակարեւոր գրառումներից է: Ֆիլմի սցենարը Եղոյանից բացի ոչ ոք չէր կարող գրել: Ներկա լինելով նկարահանումներին, ականատես եմ եղել նրա յուրահատուկ ոճին, բացահայտ ոգեւորությանը եւ դերասանների հետ համագործակցությանը:

Սովորաբար ռեժիսորները սիրում են իրենց բռունցքի մեջ պահել դերասաններին, առաջնորդել նրանց քայլերը: Եղոյանը պարադոքսային անձնավորություն է: Գեղարվեստական հետաքրքրությամբ հետեւելով յուրաքանչյուրին, նա պատված նրբազգացողությամբ կարողանում է չխոչընդոտել ոչ ոքի: Նա միշտ պահպանում է ռեժիսոր-նկարահանումների տնօրեն-դերասան եռանկյունու հաղորդակցության շրջանակներն ու նրանց փոխհամագործակցությունը: Նրա ռեժիսորական խորհուրդներն ու դիտողությունները համարյա միշտ ցածրաձայն են եւ ուղղված միայն տվյալ դերասանին: Եվ սա խիստ դրական են գնահատում դերասանները, քանի որ ոչ ոք չի ցանկանում ցուցումներ լսել բոլորի ներկայությամբ:

«Ստոմը չափազանց պատրաստակամ է լսելու կերպարի իմ բացահայտումները, խոստովանում է ֆիլմում ընդգրկված դերասան Էրիկ Պողոսյանը: Նա լսում է քեզ: Իսկ ես շատ ռեժիսորների եմ ճանաչում, որ ձեւացնում են, թե լսում են, բայց վերջում անում են ինչ իրենք են ցանկանում»:

«Կերպարը ստեղծվում է համատեղ քննարկման ժամանակ», պատմում է նրա միտքը Բրուս Գրինվուդը: «Ես ուրիշ ռեժիսորի չգիտեմ, որի հետ նույնը կարողանայի կատարել»:

«Կինոն երազների աշխարհ է», ասում է Ստոմը: Նա մեծ նշանակություն է տալիս կամերայի կամ կամերաների դիրքին: Եվ որովհետեւ համարյա միշտ նրա ֆիլմերում զուգահեռաբար 2-3 թեմա է զարգանում, ֆիլմի մոնտաժումը չափազանց բարդ խնդիր է դառնում, որը նա նույնպես բծախնդրորեն կարեւորում է:

Մեկ ուրիշ հատկանշական երեւույթ է ֆիլմի երաժշտական ձեւավորումը. «Սովորաբար երաժիշտները վերջում են ներառվում գործընթացին, բայց Եղոյանի հետ մենք սկսում ենք համագործակցել հենց սկզբից՝ սցենարը կարդալու ժամանակ», նշում է Մայքլ Դաննան՝ ավելացնելով, որ երբեւէ չի աշխատել մի ռեժիսորի հետ, որը երաժշտության ավելի լավ գիտակ լինի: «Բայց նա նաեւ քո գործի հանդեպ վստահություն ունի: Իսկ երբ քեզ վստահում են, փորձում ես քո հնարավորությունների առավելագույնը կատարել», ասում է նա:

Եղոյանը ներկայիս գործող ամենակազմակերպված ռեժիսորներից է: «Ցանկացած ֆիլմ վերջին հաշվով մի հաշվետվություն է: Հաշվետվություն այն ամենի, ինչի միջով անցել ես», ասում է նա տողերիս հեղինակին, նույնացնելով իրեն ֆիլմում գործող անձանցից Ռաֆֆու (Դեյվիդ Ալբայ) կերպարի հետ, որը, ծանոթանալով իր անցյալի պատմությանը, ամբողջովին վերափոխվում է: Ռաֆֆին երկվություն է ապրում: Նրա հորը սպանել են որպես «ահաբեկչի», եւ նա փորձում է հասկանալ իր անձնական պատմության այդ եւ իր ազգի հետ կատարված այն մեծ իրադարձությունները: Արարատ լեռ կատարած ճամփորդությունից վերադառնալով նա միանում է իր խորթ քրոջը՝ Սելիային եւ ասում նրան. «Ես այստեղ զգացի հորս ուրվականի ներկայությունը»: Դրանով նա փաստորեն հաստակություն է մտցնում իր կերպարում: Նա կարողացել է, երկար մտահոգումներից հետո, զգալ իր հոր ներկայությունը: Նշանակում է՝ հայրը, նրա հիշատակը շարունակելու է ապրել, քանի ինքն է ապրում:

Մյուս կողմից՝ նույնը կատարվում է (կատարվել է) Արշիլ Գորկու հետ: Անին ֆիլմի վերջում վերցնում է Գորկու լուսապատկերներից գուցե ամենանշանավորը, որը պատկերում է իր մորը՝ առանց ձեռքերի: Մոր հիշատակը հավերժացնելու ամենալավ միջոցը Գորկին գտել է՝ նկարելով նրան կտավի վրա: Դրանով նա, փաստորեն, անշնչացած մարմինների կույտի միջից առանձնացրել է նրան եւ զետեղել կյանքի՝ հավերժության պատվանդանին:

Ինձ թվում է, որ «Արարատ» ֆիլմով Եղոյանն էլ նույն ձեւ է վարվել:

Պատրաստեց
ՀԱԿՈԲ ՕՈՒԼԻԿՅԱՆԸ

Մարզական

Ֆուտբոլի ՀՀ առաջնության 14-րդ տուրն աչքի ընկավ գոլերի առատությամբ: Այս առումով հատկապես առանձնացավ «Փյունիկ»-«Լոռի» հանդիպումը, որում խփվեց 15 գոլ: Արդեն խաղի 34-րդ րոպեին «Փյունիկը» հաղթում էր 9-0 հաշվով եւ ռեալ վտանգ կար, որ կգերազանցվի ՀՀ առաջնությունների բացարձակ ռեկորդը («Արարատ»-«Ախթամար» 18-0, 1992 թ.): Փաստորեն, «Փյունիկի» գրեթե յուրաքանչյուր գրոհ, յուրաքանչյուր հարված ավարտվում էր դարպասի գրավումով: «Լոռին» անօգնական տեսք ուներ եւ երեւի թե մրցակցին խղճալով, նաեւ առաջնության վարկանիշը չգցելու համար «Փյունիկը» 2-րդ խաղակեսում բավարարվեց ընդամենը 4 գոլով: Իհարկե, մարզադաշտում գտնվող ֆուտբոլասերների համար, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում պատանիները, գուցե հաճելի էր տարբեր իրադարձություններում խփված բազում գոլերի ականատես դառնալ: Բայց գոլերի նման առատությունը բնավ էլ չի ուրախացնում, ընդհակառակը, խորհելու տեղիք է տալիս: Դա առաջին հերթին խոսում է ազգային առաջնության ցածր մակարդակի, մրցակցության բացակայության, թիմերի խաղամակարդակների խիստ տարբերության մասին: «Լոռին» դեռեւս անցյալ մրցաշրջանում մի շարք տխուր ռեկորդներ սահմանեց եւ սխալ էր թիմին բարձրագույն խմբում պահելը: Եվ ընդհանրապես, թիմերի քանակի արհեստական ավելացումը բնավ էլ չնպաստեց մեր ֆուտբոլի ընդհանուր զարգացմանը, առաջնությունում մրցակցության սրմանը, ինչին հակված էին որոշ մասնագետներ: Այսօր առաջնության շաս հանդիպումների ելքը կարելի է անսխալ գուշակել. հարցը միայն այն է, թե քանի՞ գնդակ կխփվի: Կյանքը ցույց տվեց, որ բարձրագույն խմբի առաջնության անցկացման լավագույն տարբերակը 8 թիմով 4 շրջանով մրցաշարի կազմակերպումն է: Այս մասին արժե, որ մտածի ֆուտբոլի ՀՀ ֆեդերացիայի եւ ակումբների ղեկավարությունը:

Կրկին վերադառնալով «Փյունիկ»-«Լոռի» հանդիպմանը, արձանագրենք Արման Քարամյանի սահմանած անձնական ռեկորդները: Նա դարձավ 6 գոլի հեղինակ: Նախկինում մեկ խաղում Արմանն առավելագույնը խփել էր 5 գնդակ («Գյումրուն» 1999 թ.): Հետաքրքրասերներին տեղեկացնենք, որ այս ցուցանիշով բացարձակ ռեկորդը պատկանում է նախկին արարատցի Վահե Յաղմուրյանին, որը 1992 թ. 8 գնդակ էր խփել Սեւանի «Ախթամարի» դարպասը: Քարամյանն ընթացիկ առաջնությունում իր գոլերի թիվը հասցրեց 22-ի եւ մեկ գնդակով գերազանցեց նախորդ մրցաշրջանի իր լավագույն ցուցանիշը: Եվ վերջապես, նա կրկնեց 23 տարեկան ֆուտբոլիստների մեջ Արսեն Ավետիսյանին պատկանող ռեկորդը, որն այդ տարիքում (1996 թ.) խփել էր բոլորից շաս 22 գնդակ: Անկասկած, այս ռեկորդը Արմանը կգերազանցի:

Գոլերի տարափն ուրախալի չէ

«Փյունիկն» ու Արման Քարամյանը ռեկորդներ են սահմանում

14-րդ տուրի կենտրոնական հանդիպումը «Միկա»-«Բանանց» մրցախաղն էր: Խաղասկիզբը հաջող էր դաշտի տերերի համար, որոնք տուգանային հարվածի խաղարկումից հետո բացեցին հաշիվը: Սակայն «Միկայի» ֆուտբոլիստների ուրախությունը կարճ տեւեց: 3 րոպե անց Արթուր Սինասյանը մտավ տուգանային հրապարակ, որտեղ Պետիկյանը նրան վայր գցեց: 11 մետրանոց հարվածն անվրեպ իրացրեց Եսայանը: Ընդհանուր առմամբ խաղն անցավ «Բանանցի» խաղային եւ տարածքային առավելությամբ: Հյուրերն ավելի գրագետ էին գործում, նրանց գրոհներն իրենց մեջ մեծ վտանգ էին պարունակում: Այսպես, 22-րդ րոպեին Ռաֆայել Նազարյանի հարվածը դիպավ դարպասի հորիզոնական ծողին: Այնուհետեւ Գագիկ Սիմոնյանի վտանգավոր հարվածը հետ մղեց Շմավոնյանը, իսկ Արթուր Սինասյանի մոտ 35 մետրից կատարված հուժկու հարվածից հետո «Միկայի» դարպասապահը գնդակը մի կերպ հանեց անկյունային: Երկրորդ խաղակեսի սկզբում «Բանանցը» հաշվի մեջ առաջ անցավ: Անկյունայինի խաղարկումից հետո Առաքելյանը գլխով գրավեց մրցակցի դարպասը: Դաշտի տերերը միայն խաղավերջում ակտիվացան փորձելով փրկել խաղը: Հաջողությանը մոտ էին Արմեն Պետիկյանն ու Կարեն Մուրադյանը, սակայն նրանց վտանգավոր հարվածները մի փոքր շեղ սացվեցին: Ընդհանուր առմամբ, «Բանանցի» հաղթանակն օրինաչափ էր:

Սպարտակցիները հետաքրքիր հաղթեցին առաջնության հետնապահներից մեկին «Կոտայքին»: Այդ խաղում 4 գոլերի հեղինակ դարձավ Արամ Հակոբյանը: Իսկ ահա, «Արարատը» չկարողացավ գտնել «Լեռնագործի» դարպասի բանալին:

Խաղերի արձանագրություններից

«Փյունիկ»-«Լոռի» 13-2 (9-1)

Արման Քարամյան (2, 13, 19, 28, 30, 52), Արկադի Չիլինգարյան (14), Միգել Սիստեռնա (20), Արտավազդ Քարամյան (21, 55, 64), Վարդան Մինասյան (34), Տիգրան Հովհաննիսյան («Լոռի», 39, 70), Ֆեռնանդո Զաֆարյան (56):

«Արցախ»-«Զվարթնոց» 0-7 (0-3)

Միխայել Դասաբաղյան (7), Տիգրան Դավթյան (11, 56, 71), Սարգիս Նազարյան (16, 88), Հակոբ Միրզոյան (73):

«Դինամո»-«Շիրակ» 0-2 (0-1)

Վարդան Բիչախչյան (7), Արարատ Հարությունյան (75 11 մ):

«Միկա»-«Բանանց» 1-2 (1-1)

1-0 Դավիթ Գրիգորյան (12), 1-1 Տիգրան Եսայան (15 11 մ), 1-2 Արարատ Առաքելյան (50):

«Սպարտակ»-«Կոտայք» 5-0 (1-0)

Արամ Հակոբյան (43, 69, 73, 83), Արշակ Ամիրյան (90):

«Արարատ»-«Լեռնագործ» 0-0

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	13	13	0	0	59-7	39
2. Շիրակ	12	10	2	0	33-4	32
3. Սպարտակ	14	9	2	3	28-12	29
4. Բանանց	14	9	2	3	20-11	29
5. Զվարթնոց	13	7	1	5	41-15	22
6. Միկա	14	6	2	6	21-18	20
7. Արարատ	14	5	4	5	20-18	19
8. Լեռնագործ	14	4	3	7	13-25	15
9. Արցախ	14	3	2	9	12-34	11
10. Դինամո	14	3	1	10	16-41	10
11. Լոռի	14	1	1	12	13-62	4
12. Կոտայք	14	0	4	10	7-36	4

Ռմբարկուներ

Արման Քարամյան («Փյունիկ»)	22
Արայոմ Աղամյան («Միկա»)	11
Արտավազդ Քարամյան («Փյունիկ»)	10
Հակոբ Սամուելյան («Լեռնագործ»)	8
Վարդան Մինասյան («Փյունիկ»)	8
Սարգիս Նազարյան («Զվարթնոց»)	8
Արամ Հակոբյան («Սպարտակ»)	8
Արարատ Հարությունյան («Շիրակ»)	7
Տիգրան Դավթյան («Զվարթնոց»)	7

Ռուսները մտահոգված են Թբիլիսիում կայանալիք խաղի անվտանգության պահպանմամբ

Հոկտեմբերի 12-ին կայանալու է ֆուտբոլի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի 2-րդ տուրը: Այդ օրն ընտրական 10-րդ խմբում ընդգրկված Վրաստանի եւ Ռուսաստանի հավաքականները պետք է մրցեն Թբիլիսիում: Սակայն վերջին օրերին երկու երկրների միջեւ հարաբերությունների սրումը խիստ անհանգստացրել է Ռուսաստանի ֆուտբոլային ղեկավարությանը, որը մտահոգված է առաջիկա հանդիպման մասնակիցների անվտանգության ապահովման հարցերով: ՌԴ ֆուտբոլային միությունն այդ առնչությամբ հարցում է կատարել վրացի իրենց գործընկերներին: Ինչպես երեւում է, ստացված պատասխանը, ինչպես նաեւ Ռուսաստանում Վրաստանի դեսպանի պարզաբանումները չեն գոհացրել ռուսական կողմին, որի կազմում ֆուտբոլային պատվիրակության այցը Վրաստան անվտանգ չէ: Ֆուտբոլային միության ղեկավարությունը դիմել է ՌԴ արտգործնախարարությանը, որն էլ պետք է վերջնականապես վճռի, թե արդյոք հնարավո՞ր է խաղի անցկացումը Վրաստանում: Ի պատասխան այդ գործողությունների, Վրաստանի ԱԳՆ-ի պատասխանատու ներկայացուցիչ Կախա Սիխարուլիձեն հայտարարել է, որ ռուսական կողմը ցանկանում է խաղաֆականացնել նույնիսկ սպորտը: Իսկ Վրաստանի ներքին գործերի նախարար Կոբա Նարչեմաշվիլին խոստացել է, որ ոստիկանությունը կապահովի հասարակական կարգի պահպանությունը եւ խաղը կանցնի նորմալ պայմաններում:

Առայժմ պարզ չէ, թե այդ խաղը որտե՞ղ կկայանա: Բացառված չէ, որ իսրայելական տարբերակով այն անցկացվի չեզոք դաշտում: Հայտնի է, որ իսրայելական ակումբներին եւ հավաքականին արգելված է սեփական հարկի խաղերն անցկացնել իրենց երկրում: Կա նաեւ մեկ այլ տարբերակ: Հնարավոր է, որ կողմերը փոխհամաձայնության գան խաղն անցկացնելու Մոսկվայում, պայմանով, որ պատասխան հանդիպումը հաջորդ տարի կայանա Թբիլիսիում: Չնայած այս տարբերակն այնքան էլ ձեռնտու չէ Ռուսաստանի հավաքականին, քանի որ այդ դեպքում հաջորդ տարի հարկ կլինի 4 խաղ անցկացնել մրցակցի եւ միայն մեկը՝ սեփական դաշտում:

Առայժմ խաղի անցկացման հարցի վերաբերյալ ՌԴ ֆուտբոլային միության ղեկավարությունը չի շտապում դիմել ՈՒԵՖԱ՝ սպասելով երկրի ԱԳՆ-ի պատասխանին:

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

«Ռեալի» տպավորիչ մեկնարկը

Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի մեկնարկում ամենատպավորիչը պատվավոր մրցանակի ներկայիս տիրոջ՝ Մադրիդի «Ռեալի» ելույթն էր: «C» խմբում հանդես եկող իսպանացիները հյուրընկալվելիս 3-0 հաշվով համոզիչ հաղթանակ տոնեցին իրենց գլխավոր հակառակորդի՝ Հռոմի «Ռոմայի» նկատմամբ: Ինչպես երեւում է, խաղի նախօրյակին Հռոմի պատից սացած օրհնությունը բարերար ազդեցություն է թողել ֆուտբոլիստների վրա: Ամենդեպքում, «Ռեալն» արդեն մեկնարկից լուրջ հայտ ներկայացրեց հաջորդ փուլի ուղեգրի համար: Խմբում կայացած մյուս խաղում («Գենկ»-Աեկ) գոլ չգրանցվեց: Անհաջող մեկնարկեց «Սպարտակը», որը Բազելում 0-2 հաշվով զիջեց տեղի համանուն թիմին: Ընդհանրապես, կայացած ութ հանդիպումներից չորսում հաջողությունն ուղեկցեց դաշտի տերերին, երեք խաղ ավարտվեց ոչ-ոքի եւ միայն «Ռեալը» հյուրընկալվելիս հաղթանակ տարավ: Խմբային մրցաշարը դեռ նոր է մեկնարկել, ուստի հիմնական պայքարն առջեւում է: Ներկայացնում ենք կայացած հանդիպումների համառոտ վիճակագրությունը.

«A» խումբ

«Արսենալ»-«Բորուսիա» Դ՝ 2-0
Բերգկամպ (62), Յունգբերգ (77):
«Օսեր»-«Էյնդհովեն»՝ 0-0
«B» խումբ
«Բազել»-«Սպարտակ»՝ 2-0
Խ. Յակին (50), Ռոսսի (55):
«Վալենսիա»-«Լիվերպուլ»՝ 2-0
Այմար (20), Բարախա (38):
«C» խումբ
«Ռոմա»-«Ռեալ»՝ 0-3
Գուտի (41, 74), Ռաուլ (56):
«Գենկ»-Աեկ՝ 0-0
«D» խումբ
«Այաքս»-«Լիոն»՝ 2-1
Իբրահիմովիչ (11, 34), Անդերսոն (84):
«Ռուսենբորգ»-«Ինտեր»՝ 2-2
Կարադաս («Ռուսենբորգ», 52, 65), Կրեսպո (33, 78):

Սկալան հրաժարական է տվել

ՈՒԵՖԱ-ի գավաթի 1/64 եզրափակիչում Վիեննայում տեղի «Աուստրիայից» կրած խոշոր հաշվով (1-5) պարտությունից հետո Դոնեցկի «Շախտյորի» գլխավոր մարզիչ, իտալացի մասնագետ Նեւիո Սկալան հրաժարական է տվել: Այս մասին նա հայտարարել է խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում: Առայժմ ակումբի ղեկավարությունը չի արձագանքել մարզչի այս քայլին:

Նախկինում իտալական «Պարման» եւ Դորտմունդի «Բորուսիան» գլխավորած Սկալան «Շախտյորի» ղեկը ստանձնեց այս տարվա հունվարին: Նրա գլխավորությամբ «Շախտյորն» Ուկրաինայի առաջնությունում հասավ կրկնակի հաջողության՝ նվաճելով երկրի գավաթն ու չեմպիոնի կոչումը: Ակումբի հետ նրա պայմանագրի ժամկետը լրանում է 2003 թ. հունիսին:

ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության մյուս հանդիպումների արդյունքներն են. «Լեյտոնը» Պորտուգալիա-ՊԱՕԿ Հունաստան՝ 2-1, «Բորդո» Ֆրանսիա-«Պուխով» Սլովակիա՝ 6-0, «Աբերդին» Շոտլանդիա-«Հերտա» Գերմանիա՝ 0-0, «Վիտես» Հոլանդիա-«Ռաքիդ» Ռումինիա՝ 1-1, «Վիկտորիա» Չեխիա-«Ռեյնջերս» Շոտլանդիա՝ 2-0:

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Մրցագորգ դուրս կգա 6 հայ ըմբիշ

Մոսկվայում մեկնարկել է հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի հերթական առաջնությունը: Մեր հանրապետությունից մոսկովյան մրցագորգ դուրս կգան Ատոմ Խաչատրյանը (55 կգ), Եվրոպայի չեմպիոն, աշխարհի փոխչեմպիոն Կարեն Մնացականյանը (60 կգ), աշխարհի ներկայիս չեմպիոն Վաղինակ Գալստյանը (66 կգ), Եվրոպայի առաջնության բրոնզե մրցանակակիր Մովսես Կարապետյանը (74 կգ), միջազգային մի շարք մրցաշարերի մրցանակակիր Լեւոն Գեղամյանը (84 կգ) եւ Ռոբերտ Պետրոսյանը (96 կգ): Հայաստանի հավաքականը գլխավորում է Լեւոն Ջուլֆալակյանը, որին օգնում են մարզիչներ Սամվել Գեւորգյանն ու Արամ Գասպարյանը: Մրցումները սպասարկող մրցավարների թվում են նաեւ Սամվել Հարությունյանը եւ ՖԻԼԱ-ի մրցավարական հանձնախմբի անդամ Ստեփան Ղազարյանը:

Գավառցի կարատեիստուհու հաջողությունը

Ֆուլ-կոնտակտ կարատեի հանրապետական ֆեդերացիայի նախագահ Գոռ Վարդանյանի նախաձեռնությամբ Գավառում գործող մարզաձեւի խմբակի անդամները շաս կարճ ժամանակահատվածում զգալի առաջընթաց են ապրել: Նրանցից մեկը՝ Գավառի թիվ 4 միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտուհի Լիանա Ֆայադյանը, շաս շուտ հմտացավ մարզաձեւում եւ արդեն հասցրել է հաղթող ճանաչվել Արտաշատում եւ Երեւանում անցկացված մրցումներում:

☎ 529353 ԱՆՎՃԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Վաճառվում է** 3 սենյականոց բնակարան Արաքսիի Գայդար 97/42 հասցեում, 9 հարկանի շենքի 4-րդ հարկում, քարե ավտոնստակով: Հեռ. 262444:
- **Վաճառվում է** բնակարան մասիվի Գայի պողոտայի 92/26 հասցեում, 4-րդ հարկում: Հեռ. 644264: Գինը 5.500 դոլար:
- **Վաճառվում է** Օշականում 900 մ տուն-հողամաս: Գինը պայմանագրային: Հեռ. 344071:
- **Բունուս կազմակերպությունը** գործարար մարդկանց (25-60 տարեկան) հրավիրում է աշխատանքի: Հասցեն Ազաթանգեղոսի 7, մուտք II, 2-րդ հարկ, բն. 31: Հեռ. 527304, 351961, Անուշ:
- **Վաճառվում է** էլեկտրական տաքի մեքենա ռուսերեն ստեղնաշարով: Գինը 50 դոլար: Հեռ. 629579:
- **Վաճառվում է** 2 սենյականոց բնակարան Երեւանի կենտրոնում, Տիգրան Մեծ պողոտայում: Գինը պայմանագրային: Հեռ. 522634, 220147.
- **Վաճառվում է** գերազանց որակի PETROF դաշնամուր: Հեռ. 538975 (մինչեւ ժ. 18.00), 228111 (18.00-ից հետո):
- **Վաճառվում է** Առինջում երկհարկանի սեփական տուն (ավտոնստակ, նկուղ), վերանորոգված: Գինը 6000 ԱՄՆ դոլար: Հեռ. 72-11-00 (մինչեւ 17.00), Գայանե:
- **Վաճառվում է** 2 սենյականոց (3-րդ հարկ, քարե շենք) բնակարան: Հասցեն Ֆուրմանովի 37 շենք, բն. 41: Գինը 13.000 դոլար: Հեռ. 25 12 96, Գայանե:
- **Վաճառվում է** 2 սենյականոց բնակարան Պուշկինի փողոցում, վերանորոգված: Հեռ. 538489. Անդրեաս:
- **Վաճառվում է** Դարտի խոռոված պատրաստ սարք: Գինը 50 դոլար: Հեռ. 24 89 89:
- **Վաճառվում է** Երեւան քաղաքի կենտրոնում 80 մ2 կիսանկուղային տարածք: Եռաֆազ հոսանք, ջուր մշտական: Հարմար է օֆիսի, սառնայի, բարի եւ այլ օբյեկտներ կառուցելու համար: Հեռ. 529 353, քջ. (09)429353:
- **Տրվում է վարձով** 2 սենյականոց բնակարան գրասենյակի համար: Հասցեն Պուշկինի 72, առաջին հարկ, վերանորոգված: Գինը ամսական 150 դոլար: Հեռ. 522556:
- **Վաճառվում է** գերմանական 474 ջուր

ՅՈՒՆԻԲԱՆԿ ЮНИБАНК

Դրամական փոխանցումներ Ռուսաստան-Հայաստան Հայաստան-Ռուսաստան ինչպես նաեւ ԱՊՀ այլ երկրներ

«Յունիսարիմը» ֆիզիկական անձանց դրամական շտապ փոխանցումների համակարգ է առանց բանկային հաշվի բացման

ՅՈՒՍԱԼԻ ՇՏԱՊ ԷԺԱՆ

Մեկ ժամվա ընթացքում Ձեր հարազատներն ու մերձավորները կարող են ստանալ փոխանցումը Երեւան՝ փոխանցման գումարի 1 %-ը

Հայաստանի մյուս քաղաքներ եւ Լեռնային Ղարաբաղ. նախկին ~~1.5~~ %-ի փոխարեն «Յունիբանկն» առաջարկում է փոխանցման գումարի 1%-ը

«Յունիբանկն» իր հաճախորդներին նորագույն բանկային տեխնոլոգիաների տրամադրման նախաձեռնողն է

Արագով եւ անվտանգ

Բոլոր պահատեղերը, որոնց պարունակությունը հանդիսանում է միայն հաճախորդի գաղտնիքը, գտնվում են անվտանգության միջոցներով հագեցած հատուկ կառուցված չհրկիզվող տարածքում:

Գաղտնիությունը

«Յունիբանկը» երաշխավորում է Ձեր գործարքների գաղտնիությունը, իսկ մեկուսացված առանձնասենյակը Ձեզ հնարավորություն կտա արկղից օգտվել բացարձակ գաղտնի պայմաններում: Յուրաքանչյուր պահատեղ կարող է բացվել միայն արկղի տիրոջ անձնական բանալիով կամ նրա կողմից պատշաճ կերպով լիազորված ներկայացուցչի կողմից:

Անհատական պահատեղերի չափերը

Հաճախորդների սպասարկումն առավել հարմարավետ դարձնելու համար առաջարկում ենք երեք տարբեր չափերի պահառության արկղեր:

(բարձրություն x լայնություն x խորություն) մմ

Չափերը	Սակագներ (ԱՄՆ դոլար)				
	7 օր	14 օր	30 օր	180 օր	365 օր
փոքր 100x220x480	9	12	18	35	45
միջին 200x220x480	12	18	23	45	60
մեծ 200x450x480	18	23	35	60	70

Այսօր Հայաստանում լինելով հնարավորություն ունենք Ռուսաստանի ֆինանսական շուկաներում գործարքներ կնքել ՅՈՏՐԵՅԴ համակարգի միջոցով

Տեղեկությունների համար զանգահարել՝
Մոսկվա 785 05 80, 787 11 73, 797 58 03:
Մեր հասցեն՝ Երեւան, Ամիրյան 12
Հեռ.՝ 53 98 70, 53 98 71, ֆաքս՝ 53 30 52
«Յունիբանկ»- իրական ներդրումներ

UTRADERU

www.utrade.ru

«Յունիբանկ»- ռեալ ներդրումներ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

1991 թ. արտադրության սպորտ. OPEL KALIBRA ավտոմեքենա, վազքը 180.000, գույնը կարմիր, SONY մագնիտոֆոն, էլեկտրական ապակիներ, անվտանգության համակարգ, ABC արգելակներ (բոշ կոմպյուտեր) եւ ավտոմատացված համակարգ: Մախսազերծված է:

Հեռ.՝ 09423833

For Your Internal News of Armenia Log on to

www.azg.am

In English, Russian, Armenian and Turkish

Armex
Հայաստանի Ֆոնդային Բորսա
Armenian Stock Exchange

2002 թ. սեպտեմբեր 18-ի առեւտրային նստաշրջան

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆԱՆՇՈՒՄ

Թողարկող Issuer	Նշան* ABBR	Արտարժույթ Listed	Առք* Bid: Լավագույն գին Best price	Միջ. կշռ. գին Avg. price	Ընդհանուր Total qnt.	Վաճառք* Ask: Լավագույն գին Best price	Միջ. կշռ. գին Avg. price	Ընդհանուր Total qnt.	Կատարված գործարքներ Transactions: Նվազ. գին Day low	առավ. գին Day high	Միջ. կշռ. գին Avg. price	արժեքը ընդհանուր Total qnt.	ծավալ Volume
ԱՐՄԱՍԻԱ	ARMJ	$	1.000.0	1.000.0	10								
ԱՇՏԱՐԱԿԵՂԵՎ	ASHB	$				2.500.0	2.500.0	21					
ԱՇՏԱՐԱԿԵՂԵՎ	ASHBP1	$				58.000.0	58.000.0	7					
ՁՈՒԼՈՒԱԼՍՏՈՒ	DZKT	$	500.0	500.0	26								
ԵՐ. ԿԱԲԵԼ ԳԱԼՎԱՆԱՅԻՆ ՅԱՎ	EKGF	$				10.000.0	10.000.0	720					
ԵՐ. ԿԱԲԵԼԱՅԻՆ ՔԱՐԱՆՑԻ ԳԱԼ	EKQG	$	400.0	400.0	10								
ԷԼՍՈՏՈՒՍՏ	ELSO	$	1.000.0	1.000.0	50								
ԵՐ. ԷԼԵԿՏՐԱԿԱՐ	ELUS	$	990.0	990.0	10								
ԷՄՊԱՍԻՈՒԹՅԱՆ ՅԱՎ ԵՐԿՐՈՒՄ	EMKFCO	$	500.0	500.0	30								
ԵՐ. ՔԻՄ ԳԱԶԱՅԻՆ ՅԱՐԿԱ	EQGF	$				10.000.0	10.000.0	1.408					
ԵՐԱԶ	ERAZ	$	1.990.0	1.990.0	10								
ԵՐԿԱԹԵՂԵՎ	ERKB	$	1.500.0	1.500.0	10								
ԵՐ. ՇԱՄՊԱՆ ԳԻՆԱՐԻՆ ԳԱԼ	ESHG	$	500.0	500.0	134								
ՀԱՇԱՐ	HASH	$	100.0	100.0	100								
ՀԱՅՈՒԱՍՏԱՆ	HATS	$	2.000.0	2.000.0	10								
ՀԱՅԵԼԵԿՏՐԱՏԵՍԱԼ	HELM	$	36.0	36.0	9.671								
ՀԱՅԿԱԲԵԼ	HKBL	$	2.000.0	2.000.0	10				36.0	36.0	36.0	20.329	731.844.0
ՄՈՍՔՎԻ ԵՐԿԱԹԻ ԳԱԼ	MOER	$	7.000.0	7.000.0	20								
ՆԵՐՆ	NERN	$				5.000.0	5.000.0	280					
ՊՈՐՆԻԿ ԱՄՊԵ	PORN	$				10.000.0	10.000.0	1.060					

* Դրանք արված գնանշումների տրամաբանական հարթեցումն առեւտրային նստաշրջանի վերջնական դրությամբ:
** 4 կիրառելի բաղկացած հատվածը բաժնետիրական ընկերության հասարակ անվանական բաժնետոմսի հատվածն է: Առանձին բաժնետոմսի դեպքում 4 կիրառելի հետո նշվում է P: առանձին բաժնետոմսերի տվյալ դասին մնացած բոլոր հանձնարարությունները: ՍՊԸ-ի բաժնեմասի դեպքում 4 կիրառելի հետո նշվում է CO:
ՀՀՇ-ում ներառյալ ցուցակված է 165 արժեքուղթ: Տեղեկություններ ներկայացվում են ՀՀՇ-ում ցուցակված այն արժեթղթերի վերաբերյալ, որոնցով տվյալ առեւտրային նստաշրջանի արդյունքում գրանցվել է գնանշումների հայտ կամ գործարք: Բոլոր գները ներկայացված են ՀՀ դրամով:
ՀՀՇ-ում ցուցակված բոլոր արժեթղթերի գնանշման ամենամյա արդյունքները հրատարակվում են անհատական կտրվածքով յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը:
Այլ տեղեկություններ հրատարակվում են ինտերնետային էջում՝ www.armex.am

© Armex

20 սեպտեմբեր 2002թ.

Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ

Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր
ԷԴՈՒԱՐԴ ԹՈՓՉՅԱՆ

Մենակատարներ՝ **Արմեն Միրաքյան**, *տենոր*
Վահան Միրաքյան, *տենոր (Ավստրիա)*
Դիրիժոր՝ **Էդուարդ Թոփչյան**

Ծրագրում՝
հատվածներ օպերաներից, երգեր

ԿԻՆՈՅԻ ՏԱՆ ԱՐԱՀ

"ԱՄՆ-Ի ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ" ՖՈՒԼԲՐԱՅԹ ԱՄԵՐԻԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՄՆ պետքարտուղարության կրթական եւ մշակութային փոխանակումների վարչությունը ԱՄՆ դեսպանության հետ համատեղ հայտարարում են Ֆուլբրայթ ամերիկագիտության դասընթացների «ԱՄՆ-ի ազգային անվտանգություն. ամերիկյան արտաքին քաղաքականության ձեւավորումը գլոբալիզացիայի դարաշրջանում» ծրագիրը (հունվար 4 - փետրվար 2, 2003 թ.): Այս ծրագիրը բաղկացած է չորսշաբաթյա գիտական սեմինարներից, որոնց նպատակն է ավելի մանրամասն ներկայացնել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմունքները՝ հիմնական շեշտը դնելով ԱՄՆ-ի ազգային անվտանգության եւ պաշտպանության խնդիրների ամերիկյան տեսակետների եւ եսասրբապատերազմյան շրջանում դրանց զարգացման վրա:

Դիմորդները պետք է լինեն դասախոսական կազմի փորձառու անդամներ եւ մասնագետներ համալսարաններից եւ ազգային ռազմական ակադեմիաներից: Ծրագրին կարող են նաեւ դիմել Պաշտպանության եւ Արտաքին գործերի նախարարություններում աշխատող պաշտոնյաներ: Անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր է: Դիմումի ձեւը կարելի է ձեռք բերել ԱՄՆ դեսպանությունից:

Դիմումները պետք է ներկայացնել ԱՄՆ դեսպանություն: Դիմումների ընդունման վերջնաժամկետը 2002 թ. սեպտեմբերի 24-ն է:

Ծրագրի համառոտ նկարագրությունը փակցված է ԱՄՆ դեսպանության ցուցատախտակին: Մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք դիմել ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատակից Հասմիկ Միքայելյանին էլ-փոստով <amerstudies@yahoo.com>. Հասցեն ԱՄՆ դեսպանություն Հայաստանում, Բաղրամյան 18, Երեւան

FULBRIGHT AMERICAN STUDIES INSTITUTE ON US NATIONAL SECURITY

The Bureau of Educational and Cultural Exchanges of the U.S. Department of State and the United States Embassy to Armenia are pleased to announce the Fulbright American Studies Institute on "U.S. National Security: American Foreign Policy Formulation in an Era of Globalization," January 4 - February 2, 2003. The program is designed as a rigorous four-week academic seminar to provide a deeper understanding of the foundations and formulations of U.S. foreign policy, with specific reference to American views on what constitutes basic U.S. national security and defense requirements and how those views have evolved in the post-cold war era.

Applicants should be experienced foreign university faculty and professionals from institutions of higher education, including national military academies. Officials from the Ministries of Defense and Foreign Ministry may also apply. Good knowledge of English is required. Application forms are available at the U.S. Embassy.

APPLICATIONS SHOULD BE RETURNED TO THE US EMBASSY TO ARMENIA NO LATER THAN SEPTEMBER 24, 2002.

A short description of the program is posted on the Embassy notice board. For detailed information about the program, please contact Ms. Hasmik Mikayelyan at the Public Affairs Section of the U.S. Embassy to Armenia.
E-mail: amerstudies@yahoo.com
Address: Baghramian Street 18, Yerevan

Արժեթղթերի գնման/վաճառքի համար դիմել Հայաստանի Ֆոնդային Բորսայի անդամ բրոքերային ընկերություններին

ԱԵՐՈԲՐՈՔ ՍՊԸ
Հ. Երեւան, Կոմիտաս 22/50
Հեռ.՝ 222725, 278469

ԱԼԻԽԱՆՅԱՆ ԲՐՈՔԵՐ ՍՊԸ
Հ. Վանաձոր, Գ.Լուսավորչի 48ա
Հեռ.՝ 41206

ԱԼԻՆՎԵՍՏ ՍՊԸ
Հ. Երեւան, Ռոստովյան 21, բն. 41
Հեռ.՝ 454112

ԱԼՍ ԷՐԶՐՈՒՄՅԻ ՍՊԸ
Հ. Վանաձոր, Տիգրան Մեծի 71/27
Հեռ.՝ (051) 22422

ԱՄԵՐԻԱ ԻՆՎԵՍՏ ՓԲԸ
Հ. Երեւան, Բաղրամյան պող. 6, բն. 2
Հեռ.՝ 524040, 524140

ԱՅՍԻ ԲՐՈԿ ԴԻԼ ՏՐԱՍՏ ՍՊԸ
Հ. Երեւան, Հալաբյան 47, բն. 31
Հեռ.՝ 348837, 277814

ԱՐԴՇԻՆԵԲՐՈՔ ՍՊԸ
Հ. Երեւան, Թումանյան 28/20
Հեռ.՝ 542674

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՍՊԸ
Հ. Երեւան, Զաֆիյան 8/19
Հեռ.՝ 581578, 566448

ԱՐՄԲՐՈԿ ՓԲԸ
Հ. Երեւան, Կորյունի 19/1
Հեռ.՝ 542125

ԵՐԵՎԱՆ-ԲՐՈՔԵՐ ՍՊԸ
Հ. Երեւան, Թումանյան 32/16
Հեռ.՝ 544657, (09)400699

Է1-ԲԻ ՍԵՔՅՈՒՐԻԹԻԶ ՍՊԸ
Հ. Երեւան, Մաշտոցի 40ա/1
Հեռ.՝ 532815

ԷՍ ԿԱԲՐՈՔ ՍՊԸ
Հ. Երեւան, Գայի պող. 57, բն. 15
Հեռ.՝ 640804

ԷՏԱԼՈՆ ԻՆՎԵՍՏ ՍՊԸ
Հ. Երեւան, Հանրապետության փող.49/2
Հեռ.՝ 620600

ԿԱՊԻՏԱԼ ԻՆՎԵՍՏ ՍՊԸ
Հ. Երեւան, Ագաթանգեղոսի 7
Հեռ.՝ 526417, 569680

Մ.Գ.Ս. ՍՊԸ
Հ.Գյումրի, Աբովյան 242-1
Հեռ.՝ 23109, 30868

ՊՐԻՎԱՏ ԻՆՎԵՍՏ ՓԲԸ
Հ. Երեւան,Նալբանդյան 50/26
Հեռ.՝ 521812, 528778

ՌԵՆԵՍԱՆՍ ՓԲԸ
Հ. Երեւան, Վարդանանց 13
Հեռ.՝ 544527

ՎՐԻԿՈ ՍՊԸ
Հ. Երեւան, Ամիրյան 24/5
Հեռ.՝ 531805

ՏՈՆՏՈՆ ՍՊԸ
Հ. Երեւան, Դեղատան 2
Հեռ.՝ 545477, 545407

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բաղրամյանց 70ա Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 18. 09. 2002 Գինը՝ 100 դրամ